



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՄԵԾԱԾԱԽ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ (ԲԱԺԻՆ 1 – 13)

ՇՈՒԿԱՅԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ  
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՐԻ ԾՐԱԳԻՐ

Մայիս 2019

Այս հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Հաշվետվության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ պրտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:



# Հայաստանի Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կանոնների նախագիծ (Բաժին 1 - 13)

Շուկայի ազատականացման և  
Էլեկտրաէներգիայի առևտրի ծրագիր

Պայմանագիր # 72011118C00001

Ներկայացվել է՝ Մայիսի 17, 2019

Պատրաստվել է՝  
Ամերիկայի Միացյալ Նահանգների  
Միջազգային զարգացման  
գործակալության հայաստանյան  
առաքելության համար  
ՀՀ, ք. Երևան 0082, Ամերիկյան խճուղի 1

Պատրաստել է՝  
Tetra Tech ES, Inc.  
1320 North Courthouse Road, Suite 600  
Arlington, VA 22201  
[www.tetratech.com](http://www.tetratech.com)

Սույն հաշվետվությունը պատրաստվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից դիտարկման նպատակով: Այն պատրաստվել է Tetra Tech ES, Inc. ընկերության կողմից՝ Շուկայի ազատականացման և Էլեկտրաէներգիայի առևտրի ծրագրի համար, պայմանագիր # 72011118C00001: Սույն հրապարակման մեջ արձարծված հեղինակի տեսակետները պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ .....</b>	<b>1</b>
<b>ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....</b>	<b>2</b>
ԳԼՈՒԽ 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ .....	2
ԳԼՈՒԽ 2. ԱՌԱՐԿԱԿԱՆ .....	12
ԳԼՈՒԽ 3. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ .....	12
ԳԼՈՒԽ 4. ԿԹԱՐԱՅԻՆ ԿԱՍ ԱՆՀԱՂԱԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԻՐԱՎԿԻՃԱԿ.....	13
ԳԼՈՒԽ 5. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ .....	13
ԳԼՈՒԽ 6. ԿԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ .....	14
ԳԼՈՒԽ 7. ՇՈՒԿԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ .....	14
<b>ԲԱԺԻՆ 2. ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ .....</b>	<b>14</b>
ԳԼՈՒԽ 8. ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ .....	14
ԳԼՈՒԽ 9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ.....	15
ԳԼՈՒԽ 10. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ .....	15
ԳԼՈՒԽ 11. ՈՉ ԽՏՐԱԿԱՆ ՄՈՒՏՔԻ ԵՐԱՇԽԱԿՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ.....	16
<b>ԲԱԺԻՆ 3. ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ .....</b>	<b>16</b>
ԳԼՈՒԽ 12. ԷՍՇ-ՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄ .....	16
ԳԼՈՒԽ 13. ԷՍՇ-Ի ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ .....	17
ԳԼՈՒԽ 14. ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՅԱՆՆԵՐ .....	17
ԳԼՈՒԽ 15. ԵՐԱՇԽԱԿՈՐԿԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐ.....	17
ԳԼՈՒԽ 16. ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ .....	17
ԳԼՈՒԽ 17. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԵԾԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ .	18
ԳԼՈՒԽ 18. ՈՐԱԿԱԿՈՐԿԱԾ ՍՊԱՌՈՂՆԵՐ.....	18
ԳԼՈՒԽ 19. ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՇՎԵԿՇՈՒՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿՈՂՄԻ ԿԱՐԳԱԿԻՃԱԿ.....	18
ԳԼՈՒԽ 20. ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՇՎԵԿՇՈՒՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂԻ ԿԱՐԳԱԿԻՃԱԿ .....	19

ԳԼՈՒԽ 21. ԷՄՇ-ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ .....	19
ԳԼՈՒԽ 22. ԷՄՇ ՄԱՍՆԱԿՑԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ .....	20
<b>ԲԱԺԻՆ 4. ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ .....</b>	<b>21</b>
ԳԼՈՒԽ 23. ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ .....	21
ԳԼՈՒԽ 24. ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱ .....	21
ԳԼՈՒԽ 25. ՕՐ ԱՌԱՋ ՇՈՒԿԱՆ .....	21
ԳԼՈՒԽ 26. ՀԱՇՎԵԿՇՈՒՄԱՆ ՇՈՒԿԱՆ .....	21
<b>ԲԱԺԻՆ 5. ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ .....</b>	<b>22</b>
ԳԼՈՒԽ 27. ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐԹԱԿՆԵՐ .....	22
ԳԼՈՒԽ 28. ԷՄՇ ՄԱՍՆԱԿՑԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔԱՐՏ .....	23
ԳԼՈՒԽ 29. ԷՄՇ ՄԱՍՆԱԿՑԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇԻՎ .....	24
<b>ԲԱԺԻՆ 6. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՎԵԿՇՈՒ     ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....</b>	<b>25</b>
ԳԼՈՒԽ 30. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ .....	25
ԳԼՈՒԽ 31. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....	25
ԳԼՈՒԽ 32. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ .....	27
<b>ԲԱԺԻՆ 7. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ     ՇՈՒԿԱՅՈՒՄ .....</b>	<b>28</b>
ԳԼՈՒԽ 33. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԲԱՂԱԴՐԻՉՈՒՄ .....	28
ԳԼՈՒԽ 34. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՉԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՈՒՄ .....	28
ԳԼՈՒԽ 35. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՈՒՄ .....	29
<b>ԲԱԺԻՆ 8. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՕՐ ԱՌԱՋ ՇՈՒԿԱՅՈՒՄ .....</b>	<b>31</b>
ԳԼՈՒԽ 36. ՕԱՇ ՀԱՅՏԵՐ .....	31
ԳԼՈՒԽ 37. ՕԱՇ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄ .....	32
<b>ԲԱԺԻՆ 9. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ,     ՏԱՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՓՈՒՆՀՈՍՔԵՐԸ .....</b>	<b>33</b>

ԳԼՈՒԽ 38.	ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ .....	33
ԳԼՈՒԽ 39.	ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱՅԱՆՈՒՄԸ.....	33
ԳԼՈՒԽ 40.	ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ .....	33
ԳԼՈՒԽ 41.	ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԱՐԱՆՑՈՒՄԸ .....	34
ԳԼՈՒԽ 42.	ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՓՈԽՅՈՍՔԵՐԸ.....	35
ԳԼՈՒԽ 43.	ՄԻՋՅԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ.....	35
<b>ԲԱԺԻՆ 10. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՀԱՇՎԵԿՇՈՒՄԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ.....</b>		<b>36</b>
ԳԼՈՒԽ 44.	ՀԱՇՎԵԿՇՈՒՄԱՆ ՇՈՒԿԱՆ.....	36
ԳԼՈՒԽ 45.	ԱՆՀԱՇՎԵԿՇՈՒԹՅՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ.....	36
<b>ԲԱԺԻՆ 11. ԷՍՇ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԱԿՈՐՈՒՄԸ .....</b>		<b>38</b>
ԳԼՈՒԽ 46.	ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԱԿՈՐՈՒՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ.....	38
ԳԼՈՒԽ 47.	ԵՐԱՇԽԱԿՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՇՎԻՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ.....	39
<b>ԲԱԺԻՆ 12. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՑՈՒՄԸ.....</b>		<b>41</b>
ԳԼՈՒԽ 48.	ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....	41
ԳԼՈՒԽ 49.	ՀԱՇՎԱՌՈՒՄԱՆ ՏԿՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	41
ԳԼՈՒԽ 50.	ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԱՐՏԱԴՐՈՂԻ ՄՈՏ .....	42
ԳԼՈՒԽ 51.	ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՀԱՂՈՐԴՈՂԻ ԵՎ ԲԱՇԽՈՂԻ ՄՈՏ.....	42
ԳԼՈՒԽ 52.	ՀԱՇՎԱՌՈՒՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԴԵՊՔԵՐԸ.....	43
ԳԼՈՒԽ 53.	ՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑՈՒՄ ԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ.....	43
ԳԼՈՒԽ 54.	ՀԱՇՎԱՐԿՆԵՐ .....	43
<b>ԲԱԺԻՆ 13. ՇՈՒԿԱՅԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ.....</b>		<b>44</b>
ԳԼՈՒԽ 55.	ՏԵՂԵԿԱՏԿՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ.....	44
ԳԼՈՒԽ 56.	ՕԱՇ-Ի ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ.....	44

ՀԱՎԵԼՎԱԾ 1. 110 ԿՎ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆԽՈՒՄԱՓԵԼԻ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴԻԿԱ .....	46
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԻՐԱՆ ԱՐՏԱՅԱՆՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ՝ ԳԱՁ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԴԻՄԱՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ.....	47



## ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կանոնների նախագիծը (Բաժին 1 - 13) պատրաստվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Շուկայի ազատականացման և էլեկտրաէներգիայի առևտրի ծրագրի շրջանակներում: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Շուկայի ազատականացման և էլեկտրաէներգիայի առևտրի ծրագիրը նպատակ ունի աջակցելու Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի բարեփոխումներին, էներգետիկ ոլորտի ռազմավարության մշակմանը, ինչպես նաև նպաստելու Վրաստանի հետ միջսահմանային առևտրի զարգացմանը: Այն ներառում է անհրաժեշտ գործողություններ դյուրինացնելու Հայաստանի կարգավորման դաշտի գործելակերպը և հնարավորինս ներդաշնակեցնելու էլեկտրաէներգետիկական համակարգի ստանդարտները ԵՄ դիրեկտիվներին:

Հայաստանի էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կանոնների նախագիծը (Բաժին 1 - 13) ուղղված է հստակեցնելու և էներգետիկայի մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանեցնելու Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված՝ Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի նոր կառուցվածքը և էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմի հայեցակարգը, ինչպես նաև կիրառվելու է էլեկտրաէներգիայի շուկայում մրցակցությունը աստիճանաբար ներդնելու և տարածաշրջանային շուկայի հետ ինտեգրումը զարգացնելու միջոցով մատակարարման անվտանգությունը բարձրացնելու նպատակով:

# ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## ԳԼՈՒԽ 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

1. Սույն Կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

**1) Անհրաժեշտ պահուստ**

ՀՊՊ-ի, ՀՓՊ-ի և ՓՊ-ի անհրաժեշտ մեծություններ (առանձին աճման և նվազման) Առևտրային օրվա յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար՝ որպես ՀԾՄ Համակարգի օպերատորի կողմից ներկայացվող պահանջ.

**2) Առաքման կետ**

Հաղորդման կամ Բաշխման ցանցի Սահմանազատման կետ կամ Ներկրման կետ, որտեղ վաճառողն էլեկտրաէներգիան հանձնում է գնորդին.

**3) Առևտրային ժամանակահատված**

[60] րոպե տևող ժամանակահատված.

**4) Առևտրային հաշվառում**

ԷՄՇ առևտրի մասնակիցները, ինչպես նաև Հաղորդողի և Բաշխողի առևտրային փոխհարաբերություններում վճարման ենթակա էլեկտրաէներգիայի քանակությունների հաշվառում.

**5) Առևտրային հաշվիչ**

ԷՄՇ պայմանագրում ամրագրված էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման հաշվիչ.

**6) Առևտրային օր**

Քսանչորս (24) հաջորդական Առևտրային ժամանակահատվածներից բաղկացած ժամանակաշրջան, որը սկսվում է ժամը 00:01-ին.

**7) Ավտոմատացված հաճախականության վերականգնման պահուստ**

Հավասարակշռման ծառայության տեսակ: Հաճախականության վերականգնման պահուստը (ՀՎՊ) ներառում է ակտիվ հզորության պահուստ, որի միջոցով համակարգի հաճախականությունը վերականգնվում է մինչև անվանական հաճախականություն: Ավտոմատացված ՀՎՊ-ն (ԱՀՎՎ) դա ՀՎՊ-ն է, որը ակտիվանում է ավտոմատ սարքի գործողությամբ: ՀՎՊ-ն փոխարինում է Հաճախականության պահպանման պահուստը (ՀՊՊ), այսինքն, այս ծառայությունը նույնպես կիրառվում է գնումների հաշվեկշռման նպատակով: ԱՀՎՊ-

ի ակտիվացման պատասխանատվությունը կրում է Համակարգի օպերատորը.

**8) Արտադրող**

Էլեկտրական Էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձ.

**9) Արտադրող կայան**

[X] ՄՎտ և բարձր տեղակայված հզորությամբ պարզ կայան, որը կարող է ընդունել և կատարել Համակարգի օպերատորի կողմից իրական ժամանակում տրված Կարգավարական հրահանգները և ունի առանձին հաշվիչ.

**10) Արտադրության ավտոմատացված վերահսկում**

Ավտոմատացված կարգավորման համակարգ, որը կառավարվում է կենտրոնից և գործում է բեռի հաճախականության վերահսկողության տարածքում գտնվող արտադրողների արտադրանքի համար կանխորոշված սահմանների տիրույթում՝ արձագանքելով համակարգի հաճախականության, միջհամակարգային գծի բեռի փոփոխմանը կամ դրանց միջև հարաբերակցության փոփոխմանը, որպեսզի պահպանվի համակարգի պլանավորված հաճախականությունը և/կամ պահպանվի հաստատված փոխանակումը այլ վերահսկողության տարածքների հետ.

**11) Բաշխման ցանց**

Էլեկտրական Էլեներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի կողմից կառավարվող և շահագործվող Էլեկտրական Էներգիայի բաշխման գծերի, ենթակայանների, և այլ սարքավորումների միասնական համակարգ, որի միջոցով Էլեկտրաէներգիան բաշխվում է սպառողներին.

**12) Բաշխման ցանցային կանոններ**

Հանձնաժողովի [X] թվականի [X]-ի N [X]-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական համակարգի բաշխման կանոններ.

**13) Բաշխող**

Էլեկտրական Էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձ.

**14) Գաղտնապահական տեղեկատվություն**

ԷՄՇ մասնակիցների ֆինանսական վիճակի և առևտրային գաղտնիքների վերաբերյալ տեղեկատվություն կամ այլ տեղեկություններ, որոնց հրապարակումը կարող է վնասել վերջիններիս.

**15) Գործարկում (կամ փորձարկում)**

Արտադրական բլոկի գործարկում կամ փորձարկում, որի ժամանակ Արտադրողը Շուկայի օպերատորին ներկայացնում է տվյալ Առևտրային օրվա յուրաքանչյուր ժամանակահատվածի համար իր արտադրող բլոկի (բլոկերի) արտադրության հատուկ գրաֆիկ.

**16) Գործարք**

Էլեկտաէներգիայի առևտրի վերաբերյալ ԷՄՇ բոլոր հատվածներում և բաղադրիչներում ԷՄՇ առևտրի մասնակիցների, ինչպես նաև Հաղորդողի և Բաշխողի միջև կնքվող համաձայնություն.

**17) Գրանցված հզորություն**

Ակտիվ հզորության (արտահայտված ՄՎտերով) առավելագույն մակարդակ հաշվի առնելով արտաքին սահմանափակումները, որը կարող է ապահովել Արտադրող կայանը, հանած օժանդակ բեռի մեծությունը, ինչպես հայտարարել է համապատասխան Մասնակիցը՝ գրանցված աշխատանքային բնութագրերի համաձայն.

**18) Երաշխավորված Մատակարար**

Էլեկտրական Էներգիայի Երաշխավորված մատակարարի լիցենզիա ունեցող անձ.

**19) ԵրԶԷԿ**

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Երևանի համակցված շոգեգազային ցիկլով աշխատող Էլեկտրակայան.

**20) Էական խափանում**

Իրավիճակ, որի ժամանակ տեղի է ունեցել ա) ԷՄՇ-ի կառավարման ծրագրի խափանում, որը հնարավոր չէ վերականգնել ոչ-Էլեկտրոնային հաղորդակցությամբ, կամ բ) Հաղորդման կամ Բաշխիչ համակարգի Էական խափանում, որի դեպքում Համակարգի օպերատորը կամ Բաշխողը պետք է անմիջապես ծանուցեն արտակարգ իրավիճակի մասին.

**21) ԷՄՇ մասնակիցներ**

Օրենքին և Կանոններին համապատասխան ԷՄՇ-ին մասնակցող՝ Էլեկտրական Էներգիայի արտադրության, Երաշխավորված մատակարարման, մատակարարման, մեծածախ առևտրի, հաղորդման, բաշխման, Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի լիցենզիա ունեցող

անձինք, ինչպես նաև որակավորված սպառողներ.

**22) ԷՄՇ պայմանագիր**

ԷՄՇ-ին մասնակցելու նպատակով ԷՄՇ մասնակիցների կողմից ստորագրվող պայմանագիր.

**23) ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ**

Էլեկտրաէներգիայի մեծածախ առևտրով զբաղվող «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերություն.

**24) Ընդհանուր բեռ**

ՀՀ բոլոր ներքին սպառման հանգույցների կողմից ստացած Էլեկտրաէներգիան ՄՎտ-ով.

**25) Ինքնավար Էներգաարտադրող (ԻԷԱ Կայան)**

Սեփական կարիքների բավարարման համար Էլեկտրական Էներգիա արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որի տեղակայանքների դրվածքային հզորությունը չի գերազանցում Օրենքով սահմանված հզորությունը.

**26) Լիցենզիա**

Հանձնաժողովի որոշմամբ տրամադրված պաշտոնական փաստաթուղթ, որը հավաստում է Էներգետիկայի բնագավառում Օրենքով նախատեսված գործունեություն իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու անձի իրավունքը, իսկ Օրենքով և լիցենզիայով նախատեսված դեպքերում՝ նաև պարտականությունը.

**27) Կանոններ**

Սույն փաստաթուղթը, որով սահմանվում են Օրենքի 39.6 հոդվածով նախատեսված Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգիայի մեծածախ շուկայի առևտրային կանոնները.

**28) Կարգավարական հրահանգ**

Համակարգի օպերատորի կողմից տրվող հրահանգ, որն ուղղված է Էլեկտրաէներգիայի արտադրության, ներկրման, արտահանման և տարանցման հնարավորությունների, ինչպես նաև կանխատեսվող սպառման ծավալների հայտարարագրման ու պլանավորման և իրական ժամանակում Էլեկտրական Էներգիայի պահանջարկն ամբողջ ծավալով բավարարելուն.

**29) ՀԱԷԿ**

«Հայկական ատոմային Էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության Մեծամորի ատոմային Էլեկտրակայան.

- 30) ՀԱԻՐ** Միջհամակարգային կապ, որը ներառում է Հայաստանի և Իրանի էլեկտրաէներգետիկական համակարգերը միացնող բարձրավոլտ հաղորդման գծեր և համապատասխան սարքավորում:
- 31) Հաղորդման ցանց** Էլեկտրական էներգիայի հաղորդման գծերի (ենթակայանների և այլ սարքավորումների) միասնական համակարգ, որի միջոցով էլեկտրական էներգիան հաղորդվում է Բաշխման ցանց, սպառողին, արտահանվում (ներկրվում) և (կամ) տարանցվում են երրորդ երկիր:
- 32) Հաղորդման ցանցային կանոններ** Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի N 161-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոններ:
- 33) Հաճախականության պահպանման պահուստ** Հաշվեկշռման ծառայության տեսակ, որն ունի ապակենտրոնացված, ավտոմատացված բնույթ և ակտիվանում է մի քանի վայրկյանների ընթացքում՝ նպատակ ունենալով սահմանափակել հաճախականության շեղումը համակարգի խախտումից հետո:
- 34) Համակարգային բեռ** Հայկական էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր բեռը:
- 35) Համակարգային ծառայություններ** Էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալի և անվտանգ աշխատանքի համար Կանոններով սահմանված կարգով կարգավորվող գներով ձեռք բերվող ծառայություններ:
- 36) Համակարգի օպերատոր** Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձ:
- 37) Հայտ** Էլեկտրաէներգիայի գնման/վաճառքի առաջարկ, որը պարունակում է Կանոններով սահմանված պայմանները:
- 38) Հանձնաժողով** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով:
- 39) Հաշվառման տվյալներ** Հաշվիչով հաշվառված և գրանցված էլեկտրաէներգիայի քանակ:

**40) Հաշվառված  
Էլեկտրաէներգիա**

Էլեկտրաէներգիայի քանակ, որը հաշվառվել է կամ համարվում է հաշվառված Հաշվարկային ժամանակահատվածի ընթացքում.

**41) Հաշվարկային  
ժամանակահատված**

[60] րոպե տևող ժամանակահատված, որն օգտագործվում է ԷՄՇ-ում առևտրային հաշվառման նպատակով.

**42) Հաշվեկշռման խումբ**

ԷՄՇ մասնակիցների խումբ, որոնք Շուկայի օպերատորի կողմից իրենց անհաշվեկշռույթների հաշվարկների կարգավորումը վերագրել են միևնույն ՀՊԿ-ին.

**43) Հաշվեկշռման ծառայության  
մատուցող (ՀԾՄ)**

ՀՊԿ, որը մատուցում է Հաշվեկշռման ծառայություններ.

**44) Հաշվեկշռման  
ծառայություններ**

Հաճախականության պահպանման պահուսի, ավտոմատացված և ձեռքով ակտիվացվող Հաճախականության վերականգնման պահուստի, Փոխարինման պահուստի ծառայություններ, որոնք անհրաժեշտ են Էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգ և հուսալի աշխատանքի համար.

**45) Հաշվեկշռման համար  
պատասխանատու կողմ (ՀՊԿ)**

ԷՄՇ մասնակից, որը ստանձնել է հաշվեկշռման պատասխանատվություն իր կամ իր հետ նույն Հաշվեկշռման խմբում ներառված մասնակիցների անհաշվեկշռույթների կարգավորման համար:

**46) Հաշվեկշռման շուկա (ՀԱՇ)**

ԷՄՇ-ի հատված, որում իրականացվում է հաշվեկշռող Էլեկտրաէներգիայի առևտուրը.

**47) Հաշվեկշռման պահուստ**

Հաշվեկշռման ծառայությունների մատուցման համար կիրառվող բոլոր տեսակի պահուստներ, մասնավորապես ՀՊՊ, ՀՓՊ և ՓՊ.

**48) Հաշվեկշռող  
Էլեկտրաէներգիա**

իրական ժամանակում Էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավարման արդյունքում Ուղիղ պայմանագրերի շուկայում և ՕԱՇ-ում վաճառված և գնված Էլեկտրական Էներգիայի քանակության տարբերություն՝ միևնույն հաշվարկային ժամանակահատվածում փաստացի առաքված և ստացված (ներառյալ՝ ներկրված և արտահանված կամ տարանցիկ փոխադրված) Էլեկտրական Էներգիայի քանակությունից, որը որոշվում է Կանոններով սահմանված կարգով.

- 49) ՀԱՎՐԱ** Միջհամակարգային կապ, որը ներառում է Հայաստանի և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերը միացնող բարձրավոլտ հաղորդման գծեր և համապատասխան սարքավորում.
- 50) ՀԷԿ** հիդրոէլեկտրակայան.
- 51) Հրազդան-5 կայան** «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Հրազդան-5» կայան
- 52) ՀրազՁԷԿ** «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՁԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության Հրազդանի ջերմային էլեկտրակայան.
- 53) ՁորաՀԷԿ** «ՁՈՐԱԳԵՏ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ՁորաՀԷԿ» ՀԷԿ.
- 54) Մատակարար** էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձ.
- 55) Մեծածախ առևտուր իրականացնող (ՄԱԻ)** էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձ.
- 56) Մեծածախ շուկա (ԷՄՇ)** ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի մեծածախ հատված, ինչպես որ այն սահմանված է Օրենքով.
- 57) Միացման պայմանագիր** Հաղորդման ցանցային կանոններով սահմանված կարգով կնքված պայմանագիր՝ արտադրող կայանը, սպառման համակարգը Հաղորդման ցանցին միացնելու վերաբերյալ.
- 58) Ներկրման կետ** Միջհամակարգային էլեկտրահաղորդման գծի կետ, որտեղից իրականացվում է էլեկտրական էներգիայի ներկրումը.
- 59) Նվազագույն տեխնիկապես կայուն արտադրություն** Արտադրող կայանի նվազագույն կայուն արտադրության մակարդակ (ՄՎտ-երով), մասնավորապես՝ այն ամենացածր մակարդակը (գրոյից բարձր), որի դեպքում կայանը կարող է նորմալ աշխատել.
- 60) Շահագործման գրանցված բնութագրեր** Համակարգին միացված ցանկացած կայանի շահագործման վերաբերյալ տվյալներ, որոնք Համակարգի օպերատորը պետք է գրանցի,



սույն Կանոնների Բաժին [X] -ի դրույթների համաձայն.

**61) ՇԿԾ ադմինիստրատոր**

ԷՄՇ առևտրի մասնակիցների, ինչպես նաև Հաղորդողի, Բաշխողի և Համակարգի օպերատորի կողմից նշանակված պատասխանատու աշխատակից, որի միջոցով ՇԿԾ գլխավոր ադմինիստրատորի կողմից իրականացվում է ՇԿԾ-ի կառավարումը.

**62) ՇԿԾ գլխավոր ադմինիստրատոր**

ՇԿԾ-ի կառավարումն իրականացնող Շուկայի օպերատորի կողմից նշանակված պատասխանատու աշխատակից.

**63) Շուկայի օպերատոր**

Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձ.

**64) Որոտանի կասկադ**

«Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության Որոտանի հիդրոէլեկտրակայանների կասկադի՝ Տաթևի, Սպանդարյանի և Շամբի ՀԷԿ-երը.

**65) Ուղեցույց**

Շուկայի օպերատորի կողմից մշակված ԷՄՇ-ի կառավարման ծրագրի օգտագործման կանոններ.

**66) Ուղիղ պայմանագրերի շուկա**

ԷՄՇ-ի հատված, որում Էլեկտրական Էներգիայի առևտուրն իրականացվում է ԷՄՇ առևտրի մասնակիցների միջև կնքված Էլեկտրական Էներգիայի առք ու վաճառքի ուղիղ պայմանագրերի հիման վրա.

**67) ՋԷԿ**

ջերմային էլեկտրակայան.

**68) Սահմանազատման կետ**

ԷՄՇ առևտրի մասնակիցների, ինչպես նաև Հաղորդողի և Բաշխողի Էլեկտրակայանքների հաշվեկշռային պատկանելության սահման.

**69) Սահմանային հաշվիչ**

Միջհամակարգային գծի վրա տեղադրված հաշվիչ.

**70) Սևան-Հրազդանյան կասկադ**

«Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության Սևան-Հրազդանյան հիդրոէլեկտրակայանների կասկադի՝ Սևանի, Հրազդանի, Արգելի, Արզնիի, Զանաքեռի, Երևան-1-ի և Երևան-3-ի ՀԷԿ-երը.

**71) Վավերացված հաշվիչների տվյալներ**

Բաշխողի կողմից Բաշխման ցանցի հաշվիչների վավերացված տվյալներ և Շուկայի օպերատորի կողմից Հաղորդման ցանցի հաշվիչների վավերացված տվյալներ, որոնք օգտագործվում են միայն Շուկայի օպերատորի կողմից պատվիրված հաշվարկային գործընթացների համար՝ անկախ տեսակից.

**72) Վերջնական արտահանման հայտ/ Արտահանման հայտ**

ՀՊԿ-ների պարտականությունների առաջարկն է արտահանման առևտրի վերաբերյալ (տարբեր շուկաներում, ներառյալ ՕԱՇ-ից հետո) ըստ յուրաքանչյուր միջհամակարգային գծի: Վերջնական է համարվում այն հայտը, որը հաստատվել է Համակարգի օպերատորի կողմից՝ Բաժին [X] դրույթներին համաձայն.

**73) Վերջնական ներկրման հայտ/ Ներկրման հայտ**

ՀՊԿ-երի պարտականությունների առաջարկն է ներկրման առևտրի վերաբերյալ (տարբեր շուկաներում, ներառյալ ՕԱՇ-ից հետո) ըստ յուրաքանչյուր միջհամակարգային գծի: Վերջնական է համարվում այն հայտը, որը հաստատվել է Համակարգի օպերատորի կողմից՝ Բաժին [X] դրույթներին համաձայն.

**74) ՎԷԱ կայաններ**

հողմային, արևային, ջրային, երկրաջերմային և կենսազանգվածի էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրական էներգիա արտադրող կայաններ, բացառությամբ Մասրիկ-1, Որոտանի կասկադի, Սևան-Հրազդանյան կասկադի և ՁորաՅԷԿ-ի.

**75) Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակ**

Էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած իրավիճակ, երբ պատվիրված պահուստային հզորություններով հնարավոր չէ իրականացնել տնտեսական կարգավարում.

**76) Տարանցում**

Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով էլեկտրական էներգիայի տարանցիկ փոխադրում՝ մուտքի մաքսային մարմնից մինչև ելքի մաքսային մարմին.

**77) Տարանցիկ փոխադրման պայմանագիր**

Տարանցիկ փոխադրման պատվիրատուի և Հաղորդողի միջև կնքված Պայմանագիր, որը ենթակա է համաձայնեցման Համակարգի օպերատորի հետ.

**78) Տարանցիկ փոխադրման պատվիրատու**

Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցվող էլեկտրաէներգիայի սեփականատեր կամ նրա լիազոր ներկայացուցիչ, որն ունի կնքված Տարանցիկ փոխադրման պայմանագիր.

**79) Տվյալների հավաքագրման և կարգավարական կառավարման (SCADA) համակարգ**

համակարգ, որն օգտագործվում է համակարգչային վերահսկողություն իրականացնելու համար.

**80) Փոքր կոգեներացիոն կայան**

մինչև 30 ՄՎտ տեղակայված էլեկտրական հզորությամբ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցող անձի կայան.

**81) Փոքր ՀԷԿ**

մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորությամբ ՀԷԿ:

**82) Բլիրինգային գին**

Առևտրային օրվա յուրաքանչյուր առևտրային ժամանակահատվածի համար՝ ՕԱՇ-ի քլիրինգային գին.

**83) Օր-առաջ շուկա (ՕԱՇ)**

ԷՄՇ հատված, որում էլեկտրական էներգիայի առևտուրն իրականացվում է էլեկտրական էներգիայի փաստացի մատակարարման օրվան նախորդող օրը.

**84) Օրենք**

«Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենք.

2. Եթե այլ բան ուղղակիորեն սահմանված չէ սույն Կանոններով, ապա դրանցում՝

- 1) եզակի թիվը ենթադրում է նաև հոգնակի թիվ և հակառակը.
- 2) բոլոր հղումներն Օրենքին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի այլ օրենքներին և նորմատիվ իրավական ակտերին ներառում են դրանցում սահմանված կարգով կատարված փոփոխությունները և լրացումները.
- 3) բոլոր ժամերը նշված են Հայաստանի Հանրապետության ժամագոտուն համապատասխան.
- 4) կիրառելի արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է.
- 5) բոլոր վճարումները կատարվում են հայկական դրամով.
- 6) բոլոր վճարումները ներառում են հարկերը՝ բացառությամբ ԱԱՀ.
- 7) բոլոր միավորները արտահայտված են Միջազգային համակարգի միավորներով.
  - ա) ակտիվ էլեկտրաէներգիայի արտադրությունը, հաղորդումը և սպառումը արտահայտվում է կՎտժ-ով (ՄՎտժ, ԳՎտժ).
  - բ) ռեակտիվ էներգիայի արտադրությունը, հաղորդումը և սպառումը արտահայտվում է կՎառժ-ով (ՄՎառժ, ԳՎառժ).

դ) հզորությունը կամ պահանջարկը արտահայտվում է կՎտ-ով կամ ՄՎտ-ով:

## **ԳԼՈՒԽ 2. ԱՌԱՐԿԱ**

3. Սույն կանոններով սահմանվում են ԷՄՇ-ի կառուցվածքը, գործունեության սկզբունքները, մասնակիցների գրանցման կարգը, առևտրի իրականացման կանոնները, Հայտերի ներկայացման կանոնները, Էլեկտրական Էներգիայի ներկրման և արտահանման կանոնները, ուղիղ պայմանագրերի, օր-առաջ և հաշվեկշռման շուկաների գործունեության կարգը, Էլեկտրաէներգիայի, հզորության, Համակարգային ծառայությունների հաշվառման ու վճարման կարգը, ԷՄՇ-ում տվյալների պահպանմանը և թափանցիկությանը ներկայացվող պահանջները, Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված կանոնները և ընթացակարգերը, ինչպես նաև ԷՄՇ-ի կազմակերպման, դրա բնականոն և արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ այլ կանոններ:

## **ԳԼՈՒԽ 3. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

4. ԷՄՇ մասնակիցները պարտավոր են՝
  - 1) սույն Կանոնների կատարման համար անհրաժեշտ բոլոր տվյալները, ներառյալ սույն կետի 3-րդ ենթակետում նշված հաշիվների ու հաշվարկների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ մյուս բոլոր տվյալները ներկայացնել Շուկայի օպերատորին.
  - 2) ծանուցել Շուկայի օպերատորին նախկինում տրամադրված իրենց տվյալների (այլ տեղեկատվության) փոփոխությունների մասին՝ այդ փոփոխությունների մասին իրենց հայտնի դառնալու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում.
  - 3) հաշվարկների պատշաճ իրականացման բոլոր նպատակների համար ունենալ բանկային հաշիվներ.
  - 4) ունենալ սույն Կանոնների պատշաճ կատարման, ներառյալ ՇԿԾ-ի օգտագործման ու հաղորդակցության համար անհրաժեշտ համակարգչային միջոցներ և տեղեկատվական համակարգեր՝ ապահովելով դրանց հուսալիությունն ու անվտանգությունը:
5. ԷՄՇ առևտրի մասնակիցների, ինչպես նաև Հաղորդողի, Բաշխողի և Համակարգի օպերատորի կողմից Շուկայի օպերատորին սահմանված կարգով ներկայացված տվյալները սույն Կանոնների կատարման բոլոր նպատակների համար համարվում են տվյալ մասնակցի կողմից ծանուցված մյուս բոլոր ԷՄՇ մասնակիցներին, ում դրանք կարող են լինել վերաբերելի:
6. Սույն Կանոնների կատարման շրջանակներում ԷՄՇ մասնակիցների կողմից տրամադրման ենթակա տեղեկատվությունը չներկայացնելու, ներկայացումն ուշացնելու, կեղծ կամ թերի տեղեկատվություն ներկայացնելու, ինչպես նաև սույն Կանոնների 4-րդ կետով սահմանված իր այլ պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում ցանկացած մասնակից պատասխանատվություն է կրում դրանով պատճառված վնասների համար:
7. Շուկայի օպերատորը ապահովում է՝
  - 1) սույն Կանոնների գործող խմբագրության մշտական հասանելիությունը ԷՄՇ մյուս բոլոր մասնակիցների համար իր պաշտոնական կայք-էջում՝ արտացոլելով դրանցում կատարվող փոփոխությունները ոչ ուշ քան դրանք ուժի մեջ մտնելու պահը.

- 2) ԷՄՇ մյուս բոլոր մասնակիցների համար Ուղեցույցի գործող խմբագրության մշտական հասանելիությունը իր պաշտոնական կայք-էջում:
- 8. Սույն Կանոնների կատարման բոլոր նպատակների համար ԷՄՇ մասնակիցների միջև հաղորդակցությունն իրականացվում է գրավոր՝ ՇԿԾ-ի, Էլեկտրոնային նամակագրության, ֆաքսիմիլային կապի, առձեռն կամ պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ :
- 9. ԷՄՇ մասնակիցները պարտավոր են պատասխանել մյուս մասնակիցների հարցումներին, դիմումներին, բողոքներին և առաջարկություններին դրանք ստանալու պահից 15 օրացուցային օրվա ընթացքում, եթե այլ ժամկետ սահմանված չէ Կանոններով:
- 10. Սույն Կանոնների 4-րդ կետին համապատասխան տրամադրված բոլոր տվյալները Շուկայի օպերատորն ու Համակարգի Օպերատորը՝
  - 1) ճշգրտորեն արտացոլում են ՇԿԾ-ում:
  - 2) պահպանում են նաև դրանք տրամադրած անձի՝ ԷՄՇ մասնակցի կարգավիճակը կորցնելուց հետո մեկ տարվա ընթացքում, որից հետո՝ ոչնչացնում:

**ԳԼՈՒԽ 4. ՎԹԱՐԱՅԻՆ ԿԱՄ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԻՐԱՎԻՃԱԿ**

- 11. Կանոնները պահպանում են իրենց ուժը, նույնիսկ այն դեպքերում, երբ ԷՄՇ մասնակիցները Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի ընթացքում չեն կատարել կամ պատշաճ չեն կատարել Կանոններով սահմանված իրենց պարտավորությունները:
- 12. Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի ընթացքում ԷՄՇ մասնակիցների կողմից պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը չի դիտարկվում Կանոնների խախտում, պայմանով որ՝
  - 1) պարտականությունները չկատարող ԷՄՇ մասնակիցը մյուս մասնակիցներին գրավոր ծանուցել է Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի առկայության և ակնկալվող տևողության մասին և շարունակաբար տրամադրում է հաշվետվություններ հետագա ընթացքի վերաբերյալ,
  - 2) պարտականությունները չկատարող ԷՄՇ մասնակիցը պարտավորվում է գործադրել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ պարտականությունների կատարումը հնարավորինս շուտ վերականգնելու նպատակով,
  - 3) Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի պատճառ դարձած հանգամանքները վերանայուց հետո ԷՄՇ մասնակիցները հնարավորինս կարճ ժամանակահատվածում ընտրում են իրենց գործունեությունը շարունակելու արդյունավետ տարբերակը, որը պետք է համապատասխանի Կանոնների պահանջներին:

**ԳԼՈՒԽ 5. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ**

- 13. ԷՄՇ ցանկացած մասնակից, որը ստանում է Գաղտնապահական տեղեկատվություն՝
  - 1) պարտավոր է պահպանել այդ տեղեկատվությունը և չբացահայտել այն որևէ այլ մասնակցի, բացառությամբ Կանոններով սահմանված դեպքերի,

- 2) պարտավոր է օգտագործել կամ վերարտադրել Գաղտնապահական տեղեկատվություն միայն այն նպատակով, որի համար այդ տեղեկությունը բացահայտվել է, կամ սույն Կանոններով սահմանված նպատակներով,
- 3) չբացահայտի Գաղտնապահական տեղեկատվությունը երրորդ անձանց, բացառությամբ ՀՀ պետական կառավարման կամ տեղական ինքնառավարման մարմիններին, ինչպես նաև դատական մարմիններին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

14. Սույն գլխի կարգավորումները չեն տարածվում այն տեղեկատվության վրա, որը բացահայտման պահին գտնվում է հանրամատչելի աղբյուրներում:

## **ԳԼՈՒԽ 6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ**

15. Սույն Կանոնների կատարման առնչությամբ ԷՄՇ մասնակիցների միջև առաջացող բոլոր վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով:
16. Շուկայի օպերատորը և Համակարգի օպերատորն իրենց իրավասությունների շրջանակներում նպաստում են առաջացող վեճերի ու տարաձայնությունների արտադատական կարգավորմանը:
17. Նախապահանջ ներկայացվելու պահից 15 օրացուցային օրվա ընթացքում վեճը (տարաձայնությունը) կողմերի համաձայնությամբ չկարգավորվելու դեպքում վեճի (տարաձայնության) ցանկացած կողմ կարող է դիմել հանձնաժողով՝ վերջինիս իրավասությունների շրջանակում վիճարկվող հարցերը լուծելու խնդրանքով, ինչպես նաև վեճի լուծումը հանձնել իրավասու դատարանին:

## **ԳԼՈՒԽ 7. ՇՈՒԿԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

18. Մասնակիցները, սույն Կանոններով սահմանված կարգով կարող են գրավոր ծանուցել Շուկայի օպերատորին՝ Կանոններով սահմանված իրենց պարտականությունները դադարեցնելու մտադրության մասին (Դադարեցման մասին ծանուցում):
19. Դադարեցման մասին ծանուցում Մասնակիցը կարող է ներկայացնել, եթե՝
  - 1) ամբողջությամբ կատարել է Կանոններով սահմանված պարտավորությունները,
  - 2) իրականացրել է Կանոններով նախատեսված բոլոր վճարումները,
  - 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցվել է իր Լիցենզիան:
20. ԷՄՇ մասնակցի ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Շուկայի օպերատորը տեղեկացնում է կրան, թե որն է համարվում տվյալ մասնակցի կողմից իր պարտականությունների դադարեցման օր (Դադարեցման օր):

## **ԲԱԺԻՆ 2. ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ**

### **ԳԼՈՒԽ 8. ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ**

21. Հայաստանի Հանրապետության Էլեկտաէներգետիկայի մեծածախ շուկան բաղկացած է առանձին հատվածներից, որոնք իրենց հերթին ներառում են բաղադրիչներ, որոնցում
  - 1) գործում են առևտրի իրարից տարբերվող կանոններ և կառուցակարգեր.
  - 2) առևտրին ներգրավվում են ԷՄՇ մասնակիցների տարբեր խմբեր.

- 3) առևտուրն իրականացվում է կարգավորվող կամ չկարգավորվող գներով.
  - 4) կնքվում են որոշակի տեսակների պայմանագրեր.
  - 5) Էլեկտրաէներգիայի առևտուրը իրականացվում է տարբեր ժամանակային շրջանակներում:
22. Կանոններով սահմանված դեպքերում և կարգով ԷՄՇ-ում առևտրի մասնակիցները, ինչպես նաև Հաղորդողն ու Բաշխողն ապահովում են Էլեկտրաէներգիայի առևտրի շրջանակներում իրենց պարտավորությունների կատարումը:
  23. ԷՄՇ-ի չկարգավորվող հատվածներում երաշխավորվում է տնտեսական մրցակցության համար համապատասխան պայմանների ապահովումը:
  24. Էլեկտրական Էներգիան կարող է արտահանվել միայն ներքին սպառման պահանջարկի բավարարումից հետո և ներքին շուկայի սպառողների շահերի պաշտպանվածության պայմանով:
  25. Հայաստանի Հանրապետությունում խրախուսվում է վերականգնվող աղբյուրներից Էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ ինչպես ՎԷԱ, այնպես էլ ԻԷԱ կայաններից:

**ԳԼՈՒԽ 9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆԸ**

26. ԷՄՇ-ն գործում է հաշվեկշռման և շուկայում առաջացած անհաշվեկշռույթների կարգավորման կառուցակարգերի հիման վրա:
27. ՀՊԿ-երը Կանոններով սահմանված կարգով կնքած և հաշվառած Գործարքներում ամրագրված Էլեկտրաէներգիայի ծավալներից շեղումների և ԷՄՇ-ում առաջացրած անհաշվեկշռույթների համար կրում են պատասխանատվություն:
28. ԷՄՇ-ում առաջացրած անհաշվեկշռույթների համար պատասխանատվությունը կարգավորվում է Հաշվեկշռման շուկային վերաբերող կարգավորումներին համապատասխան:

**ԳԼՈՒԽ 10. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆԸ**

29. ԷՄՇ-ի առևտրի մասնակիցների, ինչպես նաև Հաղորդողի և Բաշխողի կողմից Համակարգի օպերատորին և Շուկայի օպերատորին ներկայացված տեղեկատվությունը համարվում է հավաստի, քանի դեռ վերջիններս հակառակը չեն ապացուցել:
30. ԷՄՇ-ի մասնակիցների կողմից տրամադրված տեղեկատվությունը, որում այնուհետև հայտնաբերվել են սխալներ, պետք է ուղղվեն տեղեկատվությունը տրամադրած անձի կողմից՝ սխալի հայտնաբերումից հետո հնարավորինս սեղմ ժամկետում:
31. ԷՄՇ-ի առևտրի մասնակիցները ապահովում են Էլեկտրաէներգետիկական համակարգում իրենց կողմից ներկայացված տեղեկատվության հասանելիությունը Համակարգի օպերատորին և Շուկայի օպերատորին՝ անհրաժեշտության դեպքում վերջիններս տրամադրելով պահանջվող լրացուցիչ նյութեր կամ տվյալներ:
32. Համակարգի օպերատորը, Շուկայի օպերատորը, Հաղորդողը և Բաշխողը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում հրապարակվող կամ տրամադրվող տեղեկատվության ամբողջականության և հավաստիության համար:
33. Սույն կանոններով նախատեսված ցանկացած գրառում կամ փաստաթուղթ պետք է պահպանվի առնվազն հինգ տարի ժամկետով, բայց ոչ պակաս, քան տվյալ տեսակի փաստաթղթերի պահպանության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետով: Գրառումը ներառում է որևէ կերպ

գրանցված ցանկացած տեղեկատվություն, լինի դա տպագիր, էլեկտրոնային կամ այլ տեսակի:

34. Կանոններով սահմանված դեպքերում և կարգով EՄՇ-ի առևտրի մասնակիցները ապահովում են Համակարգի օպերատորի և Շուկայի օպերատորի մուտքը իրենց կայաններ:

### **ԳԼՈՒԽ 11.ՈՉ ԽՏՐԱԿԱՆ ՍՈՒՏՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ**

35. EՄՇ-ում երաշխավորվում է Հաղորդման և Բաշխման ցանցերին ոչ խտրական մուտքի իրավունքի:
36. Ցանկացած անձ իրավունք ունի իր նոր կամ վերակառուցված սպառման համակարգը կամ կայանը ոչ խտրական պայմաններով միացնել Հաղորդման կամ Բաշխման Ցանցերին՝ ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:
37. EՄՇ առևտրի մասնակիցների համար երաշխավորվում է Հաղորդման և Բաշխման ցանցերում՝ էլեկտրաէներգիան ազատ տեղափոխելու հնարավորություն:
38. EՄՇ առևտրի մասնակիցները վճարում են Հաղորդողին և (կամ) Բաշխողին համապատասխանաբար Հաղորդման և (կամ) Բաշխման ցանցին միացած լինելու դեպքում:

### **ԲԱԺԻՆ 3.ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

#### **ԳԼՈՒԽ 12. EՄՇ-ՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄ**

39. Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկային մասնակցելու նպատակով՝ մասնակիցները կնքում են EՄՇ պայմանագիր: EՄՇ պայմանագիրը կնքվում է մի կողմից EՄՇ ծառայություններ մատուցողների, մյուս կողմից EՄՇ առևտրի մասնակիցների միջև:
40. EՄՇ պայմանագիրը հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածի իմաստով միանալու պայմանագիր (օֆերտա), որին EՄՇ-ում առևտրին մասնակցել ցանկացող լիցենզիա ունեցող անձինք կարող են միանալ՝ Կանոնների 41 կետով սահմանված կարգով:
41. Կանոնների 40-րդ կետով սահմանված անձինք Շուկայի օպերատորի հաշվառմանն են ներկայացնում՝ Հանձնաժողովի կողմից սահմանված օրինակելի ձև ունեցող EՄՇ պայմանագրին միանալու ակցեպտի օրինակը:
42. Ակցեպտները Շուկայի օպերատորի կողմից ենթակա են հաշվառման՝ ներկայացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետում Շուկայի օպերատորի կողմից հիմնավորված մերժում չստանալու դեպքում, հաշվառումը համարվում է իրականացված:
43. ՊԷԱ և ՎԷԱ կայանները EՄՇ-ում էլեկտրաէներգիայի առևտուր իրականացնում են, Հանձնաժողովի կողմից հաստատված հետևալ պայմանագրերի հիման վրա՝
  - 1) Բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման և էլեկտրական էներգիայի առուվաճառքի (օրենքով գնման երաշխիք ունեցող 30 ՄՎտ և ավելի տեղակայված հզորությամբ կայանում էլեկտրական էներգիա արտադրող – բաշխող) պայմանագիր,
  - 2) Բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման եվ էլեկտրական էներգիայի առուվաճառքի (օրենքով գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորությամբ կայանում



Էլեկտրական Էներգիա արտադրող-բաշխող (Երաշխավորված մատակարար)) պայմանագիր:

### **ԳԼՈՒԽ 13. ԷՄՇ-Ի ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

44. Սույն Կանոններին համապատասխան ԷՄՇ-ում առևտուր կարող են իրականացնել սահմանված կարգով Մասնակցի կարգավիճակ ստացած Արտադրողները, Մեծածախ առևտուր իրականացնողները, Երաշխավորված մատակարարը, Մատակարարները, ինչպես նաև Որակավորված սպառողները:

### **ԳԼՈՒԽ 14. ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՅԱՆՆԵՐ**

45. Սույն Կանոնների իմաստով արտադրող կայաններ են հանդիսանում՝

1) Էլեկտրական Էներգիա արտադրողները, որոնք ենթակա են սակագնային կարգավորման և միևնույն ժամանակ կարող են գործել նաև մրցակցային գներով (այսուհետև՝ ԿԷԱ): ԿԷԱ կայանները՝

ա) Կանոններով սահմանված դեպքերով և կարգով պարտավորվում են վաճառել ԷլեկտրաԷներգիա Երաշխավորված մատակարարին, Մատակարարներին և Որակավորված սպառողներին,

բ) սույն կետի ա) պարբերությամբ սահմանված պարտավորությունը կատարելուց հետո՝ իրավունք ունեն ԷլեկտրաԷներգիա վաճառել մյուս Մասնակիցներին կամ արտահանել չկարգավորվող գներով:

2) Պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի շրջանակում գործող արտադրողները (այսուհետև՝ ՊԷԱ կայաններ), որոնք ենթակա են բացառապես սակագնային կարգավորման:

3) Փոքր ՅԷԿ-երը և ՎԷԱ կայանները, որոնք ունեն Օրենքով սահմանված Էլեկտրական Էներգիայի գնման երաշխիք:

4) Շուկայում լիարժեք մրցակցային գներով Էլեկտրական Էներգիա արտադրողները (այսուհետև՝ ՄԷԱ կայանները):

46. Գործարկման և փորձարկման փուլում գտնվող բոլոր Արտադրողները այդ ընթացքում Հաղորդման կամ Բաշխման ցանց առաքված ԷլեկտրաԷներգիան վաճառում են բացառապես Երաշխավորված մատակարարին՝ Հանձնաժողովի կողմից սահմանված պայմաններով:

47. Լիցենզիա ունեցող Արտադրող կայանները ըստ սույն Կանոնների 45-րդ կետի խմբերի դասակարգվում են Հանձնաժողովի որոշմամբ:

### **ԳԼՈՒԽ 15. ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐ**

48. Երաշխավորված մատակարարն ունի ԷՄՇ-ում, ինչպես նաև ԻԷԱ-ներից ԷլեկտրաԷներգիա գնելու և (կամ) ներկրելու իրավունք:

49. Երաշխավորված մատակարարն ունի ԷլեկտրաԷներգիան ԷՄՇ-ի մյուս Մասնակիցներին վաճառելու իրավունք:

### **ԳԼՈՒԽ 16. ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ**

50. Մատակարարներն ունեն ԷՄՇ-ում, ինչպես նաև ԻԷԱ-ներից ԷլեկտրաԷներգիա գնելու և (կամ) ներկրելու իրավունք:

51. Մատակարարներն ունեն ԷլեկտրաԷներգիայի ավելցուկը ԷՄՇ-ի մյուս Մասնակիցներին վաճառելու իրավունք:

**ԳԼՈՒԽ 17. ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ ՄԵԾԱԾԱԽ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ**

52. Էլեկտրաէներգիայի մեծածախ առևտուր իրականացնողները ունեն Կանոններով սահմանված դեպքերում և կարգով չկարգավորվող գներով ԷՄՇ մասնակիցներից և ԻԷԱ-ներից գնելու, ներկրելու, ԷՄՇ-ում այն վաճառելու և արտահանելու իրավունք:

**ԳԼՈՒԽ 18. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՍՊԱՌՈՂՆԵՐ**

53. Որակավորված սպառող են համարվում սեփական դիմումի հիման վրա Կանոններով սահմանված չափանիշներին համապատասխանելու հիմքով Շուկայի օպերատորի կողմից այդպիսին ճանաչված սպառողները:

54. Սույն կանոնների շրջանակում Որակավորված սպառող է համարվում այն սպառողը, որը միաժամանակ.

- 1) հանդիսանում է Էլեկտրաէներգիայի սպառման պահանջարկ ունեցող իրավաբանական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն,
- 2) միացած է Հաղորդման ցանցին կամ Բաշխման ցանցին և որի տարեկան սպառումը գերազանցում է 1 մլն կՎտժ,
- 3) ունի Էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգ, որը համապատասխանում է Հաղորդման ցանցային կանոնների պահանջներին,
- 4) միացել է ԷՄՇ պայմանագրին:

55. Որակավորված սպառողներն իրավունք ունեն Կանոններով սահմանված դեպքերում և կարգով Էլեկտրական Էներգիա գնել մեծածախ շուկայում, ներկրել այն կամ ավելցուկը վաճառել ԷՄՇ-ի մյուս մասնակիցներին:

**ԳԼՈՒԽ 19. ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՇՎԵԿԾՈՒՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒ ԿՈՂՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

56. ՀՊԿ կարգավիճակը տրվում է ԷՄՇ այն մասնակցին, որը պատասխանատվություն է ստանձնել իր և իր հետ միևնույն Հաշվեկշռման խմբում ընդգրկված ԷՄՇ այլ մասնակիցների անհաշվեկշռությունների համար սույն Կանոններով սահմանված դեպքերում և կարգով:

57. ՀՊԿ կարգավիճակ կարող են ստանալ Հաղորդման և Բաշխման ցանցին միացված ՄԷԱ կայանները և Որակավորված սպառողները, ինչպես նաև Մատակարարներն ու ՄԱԻ մասնակիցները՝ Շուկայի օպերատորին ներկայացված դիմումի համաձայն:

58. Շուկայի օպերատորը հիմք ընդունելով Կանոնների 57-րդ կետով սահմանված ԷՄՇ մասնակցի կողմից ներկայացված բանկային երաշխիքի թույլատրելի սահմանաչափի մնացորդը՝ այն ստանալուց [X] աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ՀՊԿ կարգավիճակ տրամադրելու կամ մերժելու մասին պատճառաբանված որոշում:

59. ՀՊԿ կարգավիճակ ունեցող ԷՄՇ ցանկացած մասնակիցն իրավունք ունի իր Հաշվեկշռման խմբում ընդգրկել կամ Հաշվեկշռման խմբից անջատել ԷՄՇ այլ մասնակիցների, եթե վերջիններս եկել են նման համաձայնության և դրա մասին ծանուցել Շուկայի օպերատորին:

60. Կանոնների 59-րդ կետով սահմանված դեպքերում ՀՊԿ կարգավիճակ ունեցող ԷՄՇ մասնակցի կողմից Շուկայի օպերատորին ծանուցում տրամադրվում է ՇԿԾ-ի միջոցով՝ [X] օր առաջ:

61. ՀՊԿ կարգավիճակ ունեցող ԷՄՇ մասնակցի և վերջինիս Հաշվեկշռման խմբում ընդգրկված ԷՄՇ մասնակցի հարաբերությունները չեն կարգավորվում, եթե այլ բան սահմանված չէ Շուկայի կանոններով:

62. Սույն Կանոնների շրջանակում ԷՄՇ մասնակիցները պարտադիր ՅՊԿ կարգավիճակ են ստանձնում հետևյալ դեպքերում.

- 1) Երաշխավորված մատակարարը ՅՊԿ կարգավիճակ է ստանձնում իր հետ պայմանագիր կնքած ՊԷԱ, ՎԷԱ կայանների, ԻԷԱ-ների, գործարկման և փորձարկման փուլում գտնվող բոլոր Արտադրողների և սպառողների համար: Սույն կետը չի սահմանափակում Երաշխավորված մատակարարի իրավունքը ՅՊԿ կարգավիճակ ստանձնել այլ դեպքերում, եթե այդ նպատակով ստացել է Հանձնաժողովի համաձայնությունը: Երաշխավորված մատակարարը չի կարող ՅՊԿ կարգավիճակ ստանալ ՀԾՄ կարգավիճակ ունեցող Մասնակցի, Հաղորդողի և Բաշխողի համար,
- 2) ԿԷԱ կայանները ստանձնում են ինքնուրույն ՅՊԿ կարգավիճակ, իրավունք ունենալով իրենց Հաշվեկշռման խմբում ընդգրկել միայն իրենց իսկ սեփական կարիքների Հաշվառման կետերը,
- 3) Մատակարարները և ՄԱԻ մասնակիցները ՅՊԿ կարգավիճակ են ստանձնում վերջիններիս հետ պայմանագիր կնքած սպառողների, ԻԷԱ-ների, ինչպես նաև այն ՄԷԱ կայանների համար, որոնք ինքնուրույն ՅՊԿ կարգավիճակ չունեն,
- 4) Որակավորված սպառողները ՅՊԿ կարգավիճակ են ստանձնում վերջիններիս հետ պայմանագիր կնքած այն ՄԷԱ կայանների համար, որոնք ինքնուրույն ՅՊԿ կարգավիճակ չունեն,
- 5) ՀԾՄ ստանձնում է ինքնուրույն ՅՊԿ կարգավիճակ, երբ ԷՄՇ ՀԱՇ հատվածից դուրս սույն Կանոններով սահմանված դեպքերում կնքել է Գործարքներ, իրավունք ունենալով իրենց Հաշվեկշռման խմբում ընդգրկել միայն իրենց իսկ սեփական կարիքների Հաշվառման կետերը:

## **ԳԼՈՒԽ 20. ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՇՎԵԿՇՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

63. ԷՄՇ-ում Հաշվեկշռման ծառայություններ մատուցողի կարգավիճակը վերապահվում է ԵրՋԷԿ-ին: ՀԾՄ կարգավիճակը չի սահմանափակում ԵրՋԷԿ-ի իրավունքը մասնակցել ԷՄՇ մյուս հատվածներում պայմանով, որ սկզբում պետք է կատարվեն վերջինիս ՀԾՄ կարգավիճակից բխող պարտավորությունները, ապա նոր միայն ԷՄՇ մնացած հատվածներում ստանձնած պարտավորությունները:

64. Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի ԿԷԱ կայանների սակագների սահմանմանը զուգընթաց սահմանում է նաև ԵրՋԷԿ-ի հաշվեկշռման ծառայությունների մատուցման առավելագույն գինը որպես հաշվեկշռման նպատակով կայանից առաքված միավոր Էլեկտրաէներգիայի գին (դրամ/կվտժ):

## **ԳԼՈՒԽ 21. ԷՄՇ-Ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ**

65. ԷՄՇ-ի մասնակիցներին ծառայություններ են մատուցում Շուկայի օպերատորը, Համակարգի օպերատորը, Հաղորդողը և Բաշխողը:

66. Սույն կանոնների առումով Շուկայի օպերատորը իրականացնում է հետևյալը՝

- 1) բոլոր Հայտերի և Գործարքների հաշվառում,
- 2) ՕԱՇ-ի բնականոն գործունեության ապահովում,
- 3) ՇԿԾ-ի շահագործումն ու սպասարկում,
- 4) ՕԱՇ քլիրինգի իրականացում, ներառյալ շուկայի հատվածները, որոնց կառավարումը կատարում է Համակարգի օպերատորը,
- 5) ԷՄՇ-ում առաջացած անհաշվեկշռույթների հաշվարկների կարգավորում,

- 6) Հաղորդողին ծանուցում Հաղորդման ցանցի կորուստները փոխհատուցելու նպատակով Շուկայում էլեկտրաէներգիա գնելու մասին և հաշվարկների կատարում,
- 7) Հաղորդման ցանցի, ինչպես նաև հաղորդման և բաշխման ցանցերի միջև տեղադրված հաշվիչների ցուցմունքների ստացում,
- 8) ԷՄՇ-ի արդյունավետ գործունեության համար սույն Կանոններով նախատեսված դեպքերում և կարգով անհրաժեշտ տեղեկատվության հրապարակում,
- 9) Ուղեցույցի ընդունում և հրապարակում:

67. Սույն կանոնների առումով Համակարգի օպերատորը իրականացնում է հետևյալը.

- 1) Էլեկտրաէներգետիկական համակարգի հաշվեկշռի պլանավորում,
- 2) Համակարգային ծառայությունների և Հաշվեկշռման շուկայի կազմակերպում և կառավարում,
- 3) Հաշվեկշռման պահուստի չափում և դրա մասին ծանուցում, Հաշվեկշռման էլեկտրաէներգիայի և Համակարգային ծառայությունների ակտիվացման մասին հրահանգների արձակում և այլ գործառնություններ, որոնք անհրաժեշտ են էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգ և հուսալի աշխատանքի համար,
- 4) Ընդհանուր բեռի կանխատեսում համակարգի հաշվեկշռման հետ կապված իր պարտականությունները կատարելու նպատակով: Նման կանխատեսման ժամանակ Համակարգի օպերատորը հաշվի է առնում Շուկայի մասնակիցների կողմից տրամադրված կանխատեսումները,
- 5) իր գործունեությանը վերաբերող ՇԿԾ-ի հարթակների շահագործում:

68. Սույն կանոնների առումով Հաղորդողը իրականացնում է հետևյալը.

- 1) Հաղորդման ցանցի կորուստների փոխհատուցելու նպատակով էլեկտրաէներգիայի գնում Շուկայում.
- 2) Հաղորդման ցանցի հաշվառման համալիրների անխափան աշխատանքի ապահովում:

69. Սույն կանոնների առումով Բաշխողը իրականացնում է հետևյալը.

- 1) Բաշխման ցանցի կորուստները փոխհատուցելու նպատակով էլեկտրաէներգիայի գնում Շուկայում.
- 2) բաշխիչ ցանցի գրանցումների և հաշվիչների ցուցմունքների ապահովում:

**ԳԼՈՒԽ 22. ԷՄՇ ՄԱՍՆԱԿՑԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

70. ԷՄՇ-ում մասնակցի գրանցումն իրականացվում է Շուկայի գլխավոր օպերատորին գրանցման դիմում ներկայացվելու միջոցով: Մասնակիցը ԷՄՇ-ում գրանցվելու հետ միասին գրանցվում է նաև ՇԿԾ համակարգում:

71. Դիմումը ստանալուց հետո Շուկայի օպերատորը 5 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է ԷՄՇ մասնակցին և տրամադրում է ՇԿԾ համակարգում գրանցման անհատական մուտքանուն, ծածկագիր, նույնականացման համարով էլեկտրոնային քարտ և էլեկտրոնային հաշիվ, որոնք պետք է պարունակեն սույն Կանոնների ԳԼՈՒԽ 28-ում և ԳԼՈՒԽ 29-ում ներկայացված տվյալները:

72. ԷՄՇ մասնակիցների էլեկտրոնային քարտում սխալներ կամ անճշտություններ հայտնաբերվելու դեպքում դրանք անմիջապես վերանայվում և թարմացվում են Շուկայի օպերատորի կողմից: ԷՄՇ մասնակիցը պարտավոր է Շուկայի

օպերատորին անհապաղ տեղեկացնել նախկինում գրանցված տվյալներում տեղի ունեցած փոփոխությունների մասին:

## **ԲԱԺԻՆ 4. ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

### **ԳԼՈՒԽ 23. ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ**

73. ԷՄՇ-ն բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.
- 1) Ուղիղ պայմանագրերի շուկա,
  - 2) Օր առաջ շուկա,
  - 3) Հաշվեկշռման շուկա:

### **ԳԼՈՒԽ 24. ՈՐԴԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱ**

74. Ուղիղ պայմանագրերի շուկան բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝
- 1) չկարգավորվող բաղադրիչ,
  - 2) կարգավորվող բաղադրիչ,
  - 3) երկարաժամկետ պայմանագրերի բաղադրիչ:
75. Ուղիղ պայմանագրերի շուկայի չկարգավորվող (այսուհետ՝ ՉՈԼՊ) բաղադրիչում առևտրին մասնակցում են ՄԷԱ կայանները, Մեծածախ առևտուր իրականացնողները, Երաշխավորված մատակարարը, Մատակարարները և Որակավորված սպառողները: ԷՄՇ-ի այս հատվածում գնվող և վաճառվող Էլեկտրաէներգիայի քանակներն ու գները որոշվում են բացառապես կողմերի համաձայնությամբ:
76. Ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում (այսուհետ՝ ԿՈԲՊ) մի կողմից մասնակցում են ԿԷԱ կայանները, իսկ մյուս կողմից՝ այն գնող Երաշխավորված մատակարարը, Մատակարարներն ու Որակավորված Սպառողները: Շուկայի այս հատվածում ԿԷԱ կայանների կողմից վաճառվող Էլեկտրաէներգիայի գները կարգավորվում են Հանձնաժողովի կողմից:
77. Ուղիղ պայմանագրերի շուկայի երկարաժամկետ (այսուհետ՝ ԵՐՊ) բաղադրիչում մի կողմից մասնակցում են ՊԷԱ և ՎԷԱ կայանները, իսկ մյուս կողմից Երաշխավորված մատակարարը:

### **ԳԼՈՒԽ 25. ՕՐ ԱՌԱՋ ՇՈՒԿԱՆ**

78. Օր առաջ շուկայում առևտուրն իրականացվում է ժամային կտրվածքով, իսկ գնվող ու վաճառվող Էլեկտրաէներգիայի քանակներն ու գները որոշվում են ՇԿԾ միջոցով՝ սույն Կանոնների ԲԱԺԻՆ 8-ով սահմանված կարգով:
79. Օր առաջ շուկայում մասնակցում են ԿԷԱ կայանները՝ Ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում չվաճառված արտադրանքի մասով, ինչպես նաև մյուս բոլոր ԷՄՇ մասնակիցները, բացառությամբ ՊԷԱ և ՎԷԱ կայանների:

### **ԳԼՈՒԽ 26. ՀԱՇՎԵԿՇՐՄԱՆ ՇՈՒԿԱՆ**

80. Հաշվեկշռման շուկայում իրականացվում է Հաշվեկշռող Էլեկտրաէներգիայի առևտուր՝ ժամային կտրվածքով, իսկ գնվող ու վաճառվող հաշվեկշռող Էլեկտրաէներգիայի քանակն ու արժեքը որոշվում են Շուկայի օպերատորի կողմից ՇԿԾ միջոցով՝ սույն Կանոնների ԲԱԺԻՆ 10-ով սահմանված կարգով:

81. Հաշվեկշռման շուկայում մասնակցում են էլեկտրաէներգիայի անհաշվեկշռույթների առաջացման համար պատասխանատու ՀԴԿ-երը և ՀԾՍ-ն:

## **ԲԱԺԻՆ 5. ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

### **ԳԼՈՒԽ 27. ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐԹԱՎՆԵՐ**

82. ՇԿԾ-ն ապահովում է ԷՄՇ-ի կազմակերպումը, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցության և շուկայի տարբեր հատվածներում առևտրի իրականացումը, պայմանագրերի կնքումը և հաշվարկների կատարումը:

83. ՇԿԾ-ն պետք է օժտված լինի այնպիսի համակարգերով, որոնք կապահովեն՝

- 1) ՇԿԾ-ի անխափան և հուսալի աշխատանքը.
- 2) ԷՄՇ մասնակիցների հաղորդակցությունը.
- 3) Էլեկտրոնային ստորագրության կիրառումը.
- 4) Էլեկտրոնային հաշիվների դուրսգրումն ու վճարումը.
- 5) ԷՄՇ տարբեր հատվածներում առաջադրվող Հայտերում ներկայացված տվյալների համապատասխանության գնահատումը և հնարավոր թերությունների մասին զգուշացումները.
- 6) ԷՄՇ տարբեր հատվածներում իրականացման ընթացքում գտնվող գործարքների և գնման բոլոր Հայտերի՝ երաշխիքով ապահովված լինելու համապատասխանության գնահատումը և առկա երաշխիքային գումարի անբավարար լինելու դեպքում՝ մասնակցի Հայտ ներկայացնելու հնարավորության ավտոմատ սահմանափակումը.
- 7) ՇԿԾ-ում ամրագրված տեղեկատվության ամբողջականության և ոչնչացումներից պաշտպանումը.
- 8) Երրորդ անձանց չթույլատրված մուտքի արգելումը.
- 9) բանկային երաշխիքով սահմանված գումարի մեծության ամրագրման միջոցով, Հայտերի ներկայացման և Գործարքների կնքման թույլատրելի սահմանափակչերի ավտոմատ կիրառումը.
- 10) առանձին էլեկտրոնային համակարգի վրա հիմնված, անվտանգության բարձր մակարդակ ունեցող և ՇԿԾ-ի գլխավոր ծրագրի հետ համապատասխանեցված պահուստավորման ծրագրի առկայությունը, որը ենթակա է գործարկման գլխավոր ծրագրի անսարքության կամ աշխատանքի ժամանակավոր խափանման դեպքում:

84. ՇԿԾ-ն նվազագույնը պետք է ներառի հետևյալ հարթակները.

- 1) Օգտատերերի տվյալների բազայի հարթակ.
- 2) Համակարգային կանխատեսումների հարթակ.
  - ա) Տարեկան հաշվեկշռի կանխատեսման մոդուլ,
  - բ) Համակարգային պահուստների կանխատեսման մոդուլ,
  - գ) Կարգավարական տեղեկատվության կառավարման մոդուլ:
- 3) Ուղիղ պայմանագրերի շուկայի կառավարման հարթակ.
- 4) Օր-առաջ շուկայի կառավարման հարթակ.
- 5) Հաշվեկշռման շուկայի կառավարման հարթակ.
- 6) Գործարքների կառավարման հարթակ.

- ա) Հայտերի ներկայացման մոդուլ,
  - բ) Կնքված գործարքների մոդուլ:
- 7) Ֆինանսական գործառնությունների հարթակ.
- ա) Ֆինանսական երաշխիքների կառավարման մոդուլ,
  - բ) Հաշիվների դուրսգրման մոդուլ:
- 8) Տեղեկատվության և հաղորդակցության հարթակ.
- ա) Ծանուցումների մոդուլ,
  - բ) Տեղեկատվական մոդուլ,
  - գ) Ուղեցույց-մոդուլ:

85. ԷՄՇ առևտրի մասնակիցները, ինչպես նաև Հաղորդողն ու Բաշխողը իրավունք ունեն մուտք գործելու միայն իրենց վերաբերող ՇԿԾ-ի հարթակներ և մոդուլներ:
86. ՇԿԾ գլխավոր ադմինիստրատորը պատասխանատու է ՇԿԾ շահագործման, սպասարկման և կառավարման համար:
87. Շուկայի օպերատորն ու Համակարգի օպերատորը, իրենց իրավասությունների սահմաններում պատասխանատու են ՇԿԾ-ում արտացոլված տեղեկատվության գաղտնիության պահպանման համար:
88. Շուկայի օպերատորն ու Համակարգի օպերատորը ԷՄՇ մյուս բոլոր մասնակիցների համար կազմակերպում են ՇԿԾ-ի շահագործմանն առնչվող ուսուցողական դասընթացներ և տրամադրում են անհրաժեշտ աջակցություն և խորհրդատվություն, որպեսզի ՇԿԾ միջոցով հաղորդակցվելու նպատակով ստեղծվի հարմար և համատեղելի օգտագործողների համակարգ:
89. Շուկայի օպերատորը մշակում է Ուղեցույց, որը պարունակում է տեղեկատվություն ՇԿԾ-ի օգտագործման կանոնների, ինչպես նաև համակարգի կամ դրա առանձին հարթակների խափանման դեպքերում ձեռնարկվող հնարավոր քայլերի մասին:

**ՉԿԾ 28. ԷՄՇ ՄԱՍՆԱԿԳԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԶԱՐԿ**

90. ԷՄՇ մասնակցի Էլեկտրոնային քարտը ներառվում է ՇԿԾ օգտատերերի բազայի հարթակում:
91. ՇԿԾ ադմինիստրատորներն ապահովում են ԷՄՇ մասնակցի Էլեկտրոնային քարտում և ԷՄՇ մասնակցի Էլեկտրոնային հաշվում սույն բաժնում սահմանված տեղեկատվության ամրագրումը և դրա ամբողջականությունը:
92. ԷՄՇ մասնակցի Էլեկտրոնային քարտի ընդհանուր պրոֆիլը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝
- 1) Մասնակցի անձնագրային տվյալները (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրի հասցեն, ՀՎՀՀ-ն) և բանկային հաշիվները.
  - 2) Մասնակցի Լիցենզիաները.
  - 3) ԷՄՇ միացման պայմանագրի վավերացված Էլեկտրոնային օրինակը և ԷՄՇ-ում վերջինիս վերապահված գործառույթները.
  - 4) ԷՄՇ հատվածները և բաղադրիչները, որոնցում Մասնակիցն իրավասու է գործունեություն իրականացնել.
  - 5) Հաշվառման վայրի և ծանուցման հասցեները, հեռախոսահամարները, Էլեկտրոնային փոստի հասցեն, առկայության դեպքում նաև՝ ֆաքսիմիլային տվյալները.
  - 6) ՇԿԾ ադմինիստրատորների տվյալները:

93. ԷՄՇ մասնակցի Էլեկտրոնային քարտն Արտադրող կայանների դեպքում պարունակում է նաև հետևյալ տեղեկատվությունը՝
- 1) Արտադրող կայանի տեղակայման հասցեն.
  - 2) Արտադրող կայանի արտադրանքը գրանցող հաշվառման համալիրների տվյալները.
  - 3) Արտադրող կայանի տեխնիկական բնութագրերը, ներառյալ Ընդհանուր կամ Մասնակի անպատրաստականության հայտարարությունները.
  - 4) ՀՊԿ տվյալները և հաշիվը, որին կցված է Կայանը, եթե վերջինս չի հանդիսանում ինքնուրույն ՀՊԿ:
94. ԷՄՇ մասնակցի Էլեկտրոնային քարտը Որակավորված սպառողների դեպքում պարունակում է նաև հետևյալ տեղեկատվությունը՝
- 1) Սպառման համակարգի տեղակայման հասցեն.
  - 2) Սպառման բեռի չափը գրանցող հաշվառման համալիրների տվյալները ըստ յուրաքանչյուր սպառման կետի.
  - 3) Սպառման համակարգի տեխնիկական բնութագրերը, ներառյալ Մասնակի կամ Ընդհանուր անպատրաստականության հայտարարությունները.
  - 4) ՀՊԿ տվյալները և հաշիվը, որին կցված է Սպառման համակարգը, եթե վերջինս չի հանդիսանում ինքնուրույն ՀՊԿ:
95. ԷՄՇ մասնակցի Էլեկտրոնային քարտը ՄԱԻ-ի դեպքում պարունակում է նաև ՀՊԿ տվյալները և հաշիվը, որին կցված է Մեծածախ առևտուր իրականացնողը ներքին շուկայում առևտուր, արտահանում և ներկրում իրականացնելու համար, եթե վերջինս չի հանդիսանում ինքնուրույն ՀՊԿ:

**ԳԼՈՒԽ 29. ԷՄՇ ՄԱՍՆԱԿՑԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇԻՎ**

96. ԷՄՇ մասնակցի Էլեկտրոնային հաշիվը բաղկացած է ստորև ներկայացված ենթահաշիվներից.
- 1) Վաճառող ենթահաշիվ.
  - 2) Գնորդ ենթահաշիվ.
  - 3) Ներկրող ենթահաշիվ.
  - 4) Արտահանող ենթահաշիվ.
  - 5) Հաշվեկշռման ենթահաշիվ:
97. Երաշխավորված մատակարարը ի թիվս սույն Կանոնների 96-րդ կետում նշված ենթահաշիվների ունի նաև «Երաշխավորված մատակարար ենթահաշիվը»:
98. ԷՄՇ մասնակցի Էլեկտրոնային հաշվի ենթահաշիվներից յուրաքանչյուրը ներառում է տվյալներ վերջինիս կողմից իրականացված գործարքների վերաբերյալ յուրաքանչյուր հաշվարկային ժամանակահատվածի համար ըստ ԷՄՇ հատվածների և բաղադրիչների, այդ թվում.
- 1) Էլեկտրաէներգիայի քանակը, որի գնման կամ վաճառքի նպատակով ԷՄՇ մասնակիցը գործարքներ է կնքել ըստ ԷՄՇ հատվածների և բաղադրիչների,
  - 2) կնքված գործարքների վավերացման վերաբերյալ կանոններով նախատեսված դեպքերում՝ Շուկայի օպերատորի և Համակարգի օպերատորի հաստատումները,
  - 3) Էլեկտրաէներգիայի քանակը ըստ հաշվառման համալիրների տվյալների, որը ԷՄՇ մասնակիցը փաստացի գնել կամ վաճառել է կնքված գործարքների շրջանակում,



- 4) Էլեկտրաէներգիայի քանակի ժամային տարբերությունները, որոնք առաջացել են ԷՄՇ մասնակցի կնքած և փաստացի իրականացրած գործարքների արդյունքում,
- 5) ԷՄՇ մասնակցի կնքած և փաստացի իրականացրած գործարքների արդյունքում Էլեկտրաէներգիայի քանակի ժամային տարբերությունների գները և դրանց աճողական հանրագումարը,
- 6) Էլեկտրաէներգիայի գնման համար առկա երաշխիքային սահմանաչափերը՝ Մատակարարի, Որակավորված սպառողի և Մեծածախ առևտուր իրականացնողի դեպքում:
- 7) Շուկայի օպերատորի կողմից ստացված և վավերացված վճարման հաշիվները:

99. ԷՄՇ մասնակցի Էլեկտրոնային հաշիվը ՀԾՄ դեպքում պարունակում է նաև հետևյալ տեղեկատվությունը.

- 1) Համակարգի օպերատորի կողմից յուրաքանչյուր Հաշվեկշռման առարկայի համար հատկացված Հաշվեկշռման պահուստը,
- 2) Յուրաքանչյուր Հաշվեկշռման առարկայի համար Հաշվեկշռող Էլեկտրաէներգիան նվազեցնելու կամ ավելացնելու հրահանգները:

## **ԲԱԺԻՆ 6. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՎԵԿՇՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

### **ԳԼՈՒԽ 30. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

100. Էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան հաշվեկշռի պլանավորումը նպատակ ունի.

- 1) գնահատել Էլեկտրաէներգետիկական համակարգի՝ բոլոր կայունացված ռեժիմների ներքո, ստանդարտ պայմաններում գործելու ժամանակ ներքին շուկայի պահանջարկը բավարարելու հնարավորությունը,
- 2) նվազագույն ծախսերով բավարարել ներքին շուկայի պահանջարկը՝ ապահովելով համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշները,
- 3) կանխատեսել ամբողջ արտադրանքի ներքին և արտաքին շուկաներում ժամային սպառումը,
- 4) կազմել Ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող ու երկարաժամկետ հատվածներում արտադրության գրաֆիկները,
- 5) գնահատել հաշվեկշռման համար անհրաժեշտ հզորությունների առկայությունը,
- 6) գնահատել միջհամակարգային (ներառյալ տարանցիկ) հոսքերի իրագործելիությունը:

### **ԳԼՈՒԽ 31. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**

101. Էլեկտրաէներգետիկական համակարգի տարեկան հաշվեկշիռը (այսուհետև՝ ԷՀՏՀ) կազմում է Համակարգի օպերատորը հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական համակարգի պահանջարկի և առաջարկի վերաբերյալ իր կողմից մշակված կանխատեսումները, գնահատականները և ենթադրությունները, Միջհամակարգային գծերի օգտագործման վերաբերյալ առկա տեղեկատվությունը, ինչպես նաև ԷՄՇ

մասնակիցներից և հարևան համակարգերում լիազորված մարմիններից ստացված տվյալները:

102. ԷՐՏՀ-ն կազմելիս Համակարգի օպերատորը սահմանում է անհրաժեշտ պահուստային հզորությունը, հաշվի առնելով Հաղորդման ցանցային կանոններում ներառված պահուստային հզորության որոշման մեթոդաբանությունը:

103. ԷՐՏՀ-ն պետք է հիմնվի տարի-առաջ պատրաստականության պլանի վրա, որը կազմվում է Համակարգի օպերատորի կողմից:

104. Մինչև յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 1-ը, սույն Կանոնների 104-րդ կետում նշված ԷՄՇ մասնակիցները Համակարգի օպերատորին են ներկայացնում են իրենց կողմից Հաղորդման և/կամ Բաշխման ցանցեր Էլեկտրաէներգիայի կանխատեսվող առաքման և պահանջարկի գրաֆիկները հաջորդ օրացուցային տարվա բոլոր 12 ամիսների համար՝ ժամային կտրվածքով:

105. ԷՄՇ մասնակիցները Համակարգի օպերատորին են ներկայացնում են հետևյալ տեղեկատվությունը՝

1) Շուկայի օպերատորը՝

ա) Միջպետական համաձայնագրերի շրջանակում կանխատեսվող արտահանման և ներկրման գրաֆիկները, ներառյալ տարանցումը,

բ) Արցախի կանխատեսվող արտահանման և ներկրման գրաֆիկները, ներառյալ տարանցումը,

2) Արտադրողները (բացառությամբ Ուդիդ պայմանագրերի շուկայի երկարաժամկետ պայմանագրերի բաղադրիչում մասնակցող Արտադրողների և ԻԷԱ-ների)՝

ա) Արտադրության գրաֆիկները և սեփական կարիքների պահանջարկը յուրաքանչյուր կայանի համար առանձին, եթե այն բաղկացած է մի քանի կայաններից:

բ) սեզոնային կարգավորման ջրամբարներ ունեցող ՀԷԿ-երի արտադրության գրաֆիկները, որոնք կազմվում են այդ ՀԷԿ-երի տարեկան միջին պատմական արտադրության հիման վրա: Բազմամյա կարգավորման ջրամբարներ ունեցող ՀԷԿ-երի արտադրության գրաֆիկները, որոնք կազմվում են Էլեկտրաէներգիայի երաշխավորված արտադրության հիման վրա, հաշվի առնելով տարվա սկզբում կանխատեսվող հիդրոլոգիական իրավիճակը և տվյալ ՀԷԿ-ի ջրամբարում պարունակվող ջրի պաշարները: Ոռոգման ռեժիմների կանխատեսումը ԷՐՏՀ-ի դիտարկվող ժամանակահատվածում, որը պետք է պարտադիր համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի հետ: Գետերի բնական հոսքի կանխատեսումները ԷՐՏՀ-ի դիտարկվող ժամանակահատվածի համար պետք է պատրաստվեն, հաշվի առնելով հիդրոլոգիական իրավիճակի փոփոխման բազմամյա միտումները և օդերևութաբանական ծառայության կանխատեսումները:

3) 30 ՄՎտ և ավելի հզորությամբ Արտադրող կայանները Համակարգի օպերատորին են ներկայացնում հետևյալ տեղեկատվությունը դիտարկվող ժամանակահատվածի յուրաքանչյուր ամսվա համար.

ա) Անպատրաստականության մասին հայտարարություն այն դեպքում, եթե ակնկալվում է, որ տվյալ կայանը ԷՐՏՀ-ի դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում որոշ ժամանակով ամբողջովին կամ

մասնակիորեն նվազեցնելու է Միացումների գրանցամատյանում գրանցված իր պատրաստ հզորությունը,

բ) Հաղորդման ցանցային կանոնների համաձայն ներկայացված տեխնիկական բնութագրերի փոփոխության այն դեպքում, եթե ԷՅՏՀ-ի դիտարկվող ժամանակահատվածում ակնկալվում է փոփոխել Միացումների գրանցամատյանում ներառված որևէ տեխնիկական տվյալ կամ տեղեկատվություն:

4) Երաշխավորված մատակարարը՝

ա) ԷՄՇ բոլոր միացման կետերի բեռի գրաֆիկները ագրեգացված տեսքով.

բ) ԷՄՇ բոլոր միացման կետերի արտադրության գրաֆիկները՝ Ուղիղ պայմանագրերի շուկայի երկարաժամկետ պայմանագրերի բաղադրիչում մասնակցող Արտադրողների համար:

5) Բաշխողը՝

ա) Ամբողջ Բաշխման ցանցի պահանջարկի տարեկան կանխատեսումը, որը պատրաստվում է Բաշխման ցանցի կանոնների պահանջներին համապատասխան.

Եթե Բաշխողի կողմից ներկայացված պահանջարկի կանխատեսումը տարբերվում է Երաշխավորված մատակարարի, Մատակարարների և Որակավորված սպառողների ներկայացված Ելքերի գրաֆիկներից, Համակարգի օպերատորը պետք է համագործակցի բոլոր կողմերի և կազմի վերջնական տարեկան պահանջարկի կանխատեսում Բաշխման ցանցի համար:

բ) Բաշխման ցանցի կորուստների տարեկան կանխատեսումը, որը բաղկացած է ակտիվ էներգիայի ամսական կորուստներից՝ ըստ ժամերի: Բացի կանխատեսումից, Բաշխողը ներկայացնում է նաև տեղեկատվություն՝ հաստատուն ու փոփոխական հոսանքի և պիկային/ոչ-պիկային կորուստների բաղադրիչների և/կամ համապատասխան բեռի կորերի վերաբերյալ, կազմված համաձայն Բաշխման ցանցային կանոնների բաշխման կորուստների կանխատեսման մեթոդաբանության.

6) Մատակարարը պետք է ներկայացնի ԷՄՇ բոլոր միացման կետերի բեռի գրաֆիկները ագրեգացված տեսքով:

7) Որակավորված սպառողը պետք է ներկայացնի ԷՄՇ բոլոր միացման կետերի բեռի գրաֆիկները ագրեգացված տեսքով:

106. Համակարգի օպերատորը ԷՅՏՀ-ի դիտարկվող ժամանակահատվածում գործարկված նոր կայանների կանխատեսվող Արտադրության գրաֆիկները պետք է որոշի Հանձնաժողովի կողմից տրամադրած Լիցենզիաների հիման վրա:

### **ԳԼՈՒԽ 32. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ**

107. Համակարգի օպերատորը պարտավոր է յուրաքանչյուր տարի մինչև նոյեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի հետ համաձայնեցնել և Հանձնաժողով ու ԷՄՇ-ի մասնակիցներին ներկայացնել ԷՅՏՀ-ն, ներառյալ Արտադրողների սարքավորումների պլանային նորոգումների ժամանակացույցերն ըստ ամիսների:

108. Հանձնաժողովը ԷՅՏՀ-ի արդյունքները ստանալուց տասն աշխատանքային օրվա ընթացքում կարող է Համակարգի օպերատորից պահանջել տրամադրել պարզաբանումներ, ներառյալ պահանջել վերանայել ԷՅՏՀ-ի արդյունքները, եթե՝

- 1) ԷՅՏՅ-ն չի բավարարում Հաղորդման ցանցային կանոններում սահմանված Էլեկտրաէներգետիկական համակարգի հաշվեկշռման ընդունելի մակարդակը որոշող չափանիշներին,
  - 2) ԷՅՏՅ-ի համար կիրառված մեթոդները չեն արտացոլում Մասնակիցների և Շուկայի ծառայություններ մատուցողների առևտրային հարաբերությունները, ինչպես պահանջվում է Կանոններով,
  - 3) ԷՅՏՅ-ի արդյունքներում հայտնաբերվել են Էական բացթողումներ և չիմնավորված ենթադրություններ:
109. Սույն Կանոնների 108-րդ կետով սահմանված դեպքում Համակարգի օպերատորը անհրաժեշտ պարզաբանումները տրամադրում է ոչ ուշ քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
110. ԷՄՇ մասնակիցները մինչև նոյեմբերի 15-ը կարող են Հանձնաժողով ներկայացնել իրենց առաջարկությունները՝ ուղղված ԷՅՏՅ հստակեցմանը:
111. Հանձնաժողովը ԷՅՏՅ-ին հավանություն է տալիս մինչև դեկտեմբերի 25-ը, վերջինիս հավանության արժանացած տարբերակն երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկելով Համակարգի օպերատորին, Շուկայի օպերատորին և ԷՄՇ մասնակիցներին:
112. Համակարգի օպերատորը հավանության արժանացած ԷՅՏՅ-ն ներբեռնում է ՇԿԾ:

## ԲԱԺԻՆ 7. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

### ԳԼՈՒԽ 33. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԵՐԿԱՐԱԺԱՍԿԵՏ ԲԱՂԱԴՐԻՉՈՒՄ

113. Երաշխավորված մատակարարի և ՊԷԱ ու ՎԷԱ կայանների միջև Էլեկտրաէներգիայի առևտուրը ԷՄՇ ԵՐՊ բաղադրիչում իրականացնում է սույն Կանոնների ԳԼՈՒԽ 33-ում նշված պայմանագրերի հիման վրա:
114. ՊԷԱ և ՎԷԱ կայանները ԷՄՇ այլ հատվածներում կամ բաղադրիչներում Էլեկտրաէներգիա վաճառելու իրավունք չունեն: Վերջիններիս կողմից Երաշխավորված մատակարարին վաճառվող Էլեկտրաէներգիայի գները կարգավորվում են Հանձնաժողովի կողմից:
115. Համակարգի օպերատորը կարագավարական որոշումներ ընդունելիս պարտավոր է հաշվի առնել Երաշխավորված մատակարարի կողմից ՊԷԱ և ՎԷԱ կայաններից Էլեկտրաէներգիա գները առաջնահերթ պարտավորությունը:

### ԳԼՈՒԽ 34. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՈՒՄ

116. ՄԷԱ կայանների, ՄԱԻ մասնակիցների, Երաշխավորված մատակարարի, Մատակարարների և Որակավորված սպառողների միջև Էլեկտրաէներգիայի առևտուրը ԷՄՇ ՉՈՒՊ բաղադրիչում իրականացվում է բացառապես կողմերի միջև կնքված գործարքների հիման վրա: Այդ գործարքների շրջանակում Էլեկտրաէներգիայի առուվաճառքի նախատեսվող քանակությունների ներկրման, հաղորդման, արտահանման կամ բաշխման հնարավորությունը պետք է հաստատվի Համակարգի օպերատորի կողմից, ինչպես նաև գրանցվի Շուկայի օպերատորի կողմից՝ ՇԿԾ համակարգի միջոցով:
117. ԷՄՇ ՉՈՒՊ բաղադրիչի մասնակիցները գործարքի իրականացման համար ՇԿԾ համակարգի միջոցով պարտավոր են Համակարգի օպերատորի հաստատմանը ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

- 1) [X],
- 2) [X],
- 3) [X]:

118. ՉՈՒՊ բաղադրիչում մասնակցի բանկային երաշխիքի թույլատրելի սահմանաչափի մնացորդը պետք է առնվազն եռակի գերազանցի վերջինիս կողմից կնքվող Գործարքի շրջանակում գնվող էլեկտրաէներգիայի միջին օրական հաշվարկային արժեքը, որի մեծությունը որոշվում է Գործարքի շրջանակում գնվող էլեկտրաէներգիայի միջին օրական քանակի և ՀԾՄ մատուցման համար Հանձնաժողովի սահմանած առավելագույն գնի հիման վրա:

119. Համակարգի օպերատորը EՄՇ ՉՈՒՊ բաղադրիչի մասնակցի կողմից գործարքի հաստատման դիմումը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ մերժում է գործարքի իրականացման հնարավորությունը: Մերժման դեպքում Համակարգի օպերատորը ՇԿԾ համակարգ է ներբեռնում մերժման պատճառների վերաբերյալ իր եզրակացությունը համապատասխան բացատրություններով:

120. Շուկայի օպերատորը EՄՇ ՉՈՒՊ բաղադրիչի մասնակիցների գործարքը՝ Համակարգի օպերատորի կողմից հաստատման դեպքում 1 աշխատանքային օրվա ընթացքում.

- 1) գործարքը գրանցում է ՇԿԾ համակարգում որպես կողմերի միջև կնքված գործարք կամ նույն ժամկետում մերժում է գործարքի գրանցումը, եթե կողմերից որևէ մեկը ՀՊԿ չի հանդիսանում,
- 2) գրանցված գործարքին համապատասխան մասնակիցների էլեկտրոնային քարտերի համապատասխան ենթահաշվիներն հաշվեգրում է մասնակիցների՝ միմյանց առաքման ենթակա էլեկտրաէներգիայի քանակների մասին տվյալները, առանց վճարման ենթակա գումարների մասին տվյալների:

121. EՄՇ ՉՈՒՊ հատվածում կնքված գործարքներից շեղումների դեպքում Շուկայի օպերատորը և գործարքի կողմերը առաջնորդվում են սույն Կանոնների ԳԼՈՒԽ 45-ում սահմանված EՄՇ ՀԱՇ կարգավորումներով:

**ԳԼՈՒԽ 35. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԲԱՂԱԴՐԻՉՈՒՄ**

122. ԿԷԱ կայանների, Երաշխավորված մատակարարի, Մատակարարների և Որակավորված սպառողների միջև էլեկտրաէներգիայի առևտուրն իրականացվում է Հանձնաժողովի կողմից EՄՇ ԿՈՒՊ բաղադրիչում վաճառքի համար թույլատրված ամսական էլեկտրաէներգիայի չափաքանակների և հաստատված սակագների հիման վրա:

123. Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի EՀՏՀ հավանության տալու հետ միաժամանակ հաստատում է հաջորդ տարվա EՄՇ ԿՈՒՊ բաղադրիչում ԿԷԱ յուրաքանչյուր կայանի կողմից վաճառքի ենթակա էլեկտրաէներգիայի չափաքանակները՝ ամսական կտրվածքով:

124. Յուրաքանչյուր ամիս մինչև ամսի 20-ը Երաշխավորված մատակարարը, Մատակարարները և Որակավորված սպառողները ՇԿԾ միջոցով Շուկայի օպերատորին են ներկայացնում հաջորդ ամսվա EՄՇ ԿՈՒՊ բաղադրիչում էլեկտրաէներգիայի գնման իրենց Հայտերը:

125. ԿՈՒՊ բաղադրիչում մասնակցի բանկային երաշխիքի թույլատրելի սահմանաչափի մնացորդը պետք է առնվազն մեկ քարորդով գերազանցի վերջինիս կողմից ներկայացվող գնման Հայտում նշված էլեկտրաէներգիայի արժեքը, որը հաշվարկվում է գնման Հայտում նշված էլեկտրաէներգիայի քանակի և Հանձնաժողովի հաստատած սակագների հիման վրա:

126.Շուկայի օպերատորը Հանձնաժողովի կողմից տվյալ ամսվա համար EՄՇ ԿՈՒՊ բաղադրիչում ԿԷԱ կայանների կողմից վաճառքի ենթակա էլեկտրաէներգիան մեկ աշխատանքային օրվա ընթացքում բաշխում է Հայտ ներկայացրած Երաշխավորված մատակարարի, Մատակարարների և Որակավորված սպառողների միջև՝ հայտերում նշված էլեկտրաէներգիայի պահանջարկի համամասնություններին համապատասխան և ուղարկում կողմերի հաստատմանը:

127.ԿԷԱ կայանները, Երաշխավորված մատակարարը, Մատակարարները և Որակավորված սպառողները մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաստատում են Շուկայի օպերատորի կողմից EՄՇ ԿՈՒՊ բաղադրիչի համար առաջարկվող գործարքները կամ ուղարկում ծանուցում անհամաձայնության մասին՝ մանրամասն նշելով դրա պատճառները:

128.Շուկայի օպերատորը ԿԷԱ կայաններից որևէ մեկի կողմից անհամաձայնության մասին ծանուցում ստանալու դեպքում իրականացնում է հետևյալ քայլերը.

1) Եթե անհամաձայնության մասին ծանուցման մեջ բերված պատճառները վերաբերում են Հանձնաժողովի կողմից սահմանած սակագնին կամ տվյալ ամսում ԿԷԱ կայանից EՄՇ ԿՈՒՊ բաղադրիչի վաճառքի ենթակա էլեկտրաէներգիայի քանակին, ապա այն մերժվում է և գործարքը տվյալ ԿԷԱ կայանի մասով համարվում է կնքված հայտ ներկայացրած Երաշխավորված մատակարարի, Մատակարարների և Որակավորված սպառողների հետ:

2) Եթե անհամաձայնության մասին ծանուցման մեջ բերված պատճառները վերաբերում են հանգամանքների, որոնք Շուկայի օպերատորը համարում է հիմնավորված, ապա վերջինս սույն կանոնների 126-րդ կետում սահմանված սկզբունքով կատարում է վերահաշվարկ և կրկին ուղարկում կողմերի հաստատմանը,

3) ,

129.Շուկայի օպերատորը Երաշխավորված մատակարարից, Մատակարարներից կամ Որակավորված սպառողներից որևէ մեկի կողմից անհամաձայնության մասին ծանուցում ստանալու դեպքում իրականացնում է հետևյալ քայլերը.

1) Եթե անհամաձայնության մասին ծանուցման մեջ բերված պատճառները վերաբերում են EՄՇ ԿՈՒՊ բաղադրիչից հայտում նշված էլեկտրաէներգիայի պահանջվող քանակությանը, ապա այն մերժվում է և գործարքը տվյալ մասնակցի մասով համարվում է կնքված,

2) Եթե անհամաձայնության մասին ծանուցման մեջ բերված պատճառները վերաբերում են հանգամանքների, որոնք Շուկայի օպերատորը համարում է հիմնավորված, ապա վերջինս սույն կանոնների 126-րդ կետում սահմանված սկզբունքով կատարում են վերահաշվարկ և կրկին ուղարկում կողմերի հաստատմանը:

130.Շուկայի օպերատորը EՄՇ ԿՈՒՊ բաղադրիչի գործարքների հաստատումից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում գրանցված գործարքներին համապատասխան՝ մասնակիցների էլեկտրոնային քարտերի համապատասխան ենթահաշվիներում հաշվեգրում է մասնակիցների՝ միմյանց առաքման ենթակա էլեկտրաէներգիայի քանակների և վճարման ենթակա գումարների մասին տվյալները:

131. EՄՇ ԿՈՒՊ բաղադրիչում կնքված գործարքներից շեղումների դեպքում Շուկայի օպերատորը և գործարքի կողմերը առաջնորդվում են սույն Կանոնների ԳՆՈՒԽ 45-ում բերված EՄՇ ՀԱՇ կանոններով:

## **ԲԱԺԻՆ 8. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՕՐ ԱՌԱՋ ՇՈՒԿԱՅՈՒՄ**

### **ԳԼՈՒԽ 36. ՕԱՇ ՀԱՅՏԵՐ**

132. ՕԱՇ-ի բոլոր գործողությունները իրականացվում են մեկ Առևտրային օրվա (այսուհետև՝ ՕՐԱ) համար և ավարտվում են Առևտրային օրվա նախորդ օրը (այսուհետև՝ ՕՐԱՆ1)՝ սույն Բաժնում սահմանված ժամկետներում:
133. ԷՄՇ ԿՈՒՊ բաղադրիչում մասնակցող ԿԷԱ կայանները պարտավոր են մասնակցել ՕԱՇ-ում ԷՄՇ մնացած հատվածներում գործարքի առարկա չհանդիսացող հզորությունների չափով:
134. ԵրՋԷԿ-ը իրավունք չունի մասնակցել ՕԱՇ-ում՝ իր արդեն իսկ ստանձնած պարտավորությունների մասով:
135. ԷՄՇ մասնակիցների կողմից ՕԱՇ ներկայացվող վաճառքի Հայտերի գները չեն կարող գերազանցել Հանձնաժողովի կողմից սահմանված ՀԾՄ առավելագույն գինը:
136. ՕԱՇ Հայտերի գները չեն կարող ունենալ բացասական արժեք, նման Հայտերը մերժվում են Շուկայի օպերատորի կողմից:
137. ՕԱՇ վաճառքի Հայտերում սահմանված Էլեկտրաէներգիայի քանակները համարվում են առաքված դեպի Հաղորդման ցանց կամ Բաշխման ցանց՝ վաճառողի Առաքման կետից:
138. ՕԱՇ-ի մասնակիցները կարող են ներկայացնել հետևյալ տեսակի Հայտերը.
- 1) վաճառքի պարզ օրական Հայտ արտադրված Էլեկտրաէներգիան առաքելու կամ վաճառքի նպատակով ներկրելու համար,
  - 2) գնման պարզ օրական Հայտ Էլեկտրաէներգիայի պահանջարկը բավարարելու կամ այն արտահանելու համար:
139. ՕԱՇ Հայտերը պետք է պարունակեն առնվազն հետևյալ տեղեկատվությունը.
- 1) Եթե վաճառքի Հայտը առաջարկում է մեկ գին ՕՐԱ յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար ապա այն պետք է պարունակի.
    - ա) առաջարկվող Էլեկտրաէներգիայի գինը 2 տասնորդական միավոր ճշտությամբ արտահայտված ՀՀ դրամ/կՎտժ-ով.
    - բ) առաջարկվող Էլեկտրաէներգիայի քանակը արտահայտված կՎտժ-ով:
  - 2) Եթե վաճառքի Հայտը առաջարկում է Էլեկտրաէներգիայի վաճառքի քանակից կախված տարբեր գներ ՕՐԱ յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար, ապա այն պետք է պարունակի նախորդ ենթակետում նշված տեղեկատվությունը առաջարկվող յուրաքանչյուր խմբաքանակի համար:
  - 3) Գնման Հայտը պետք է պարունակի ՕՐԱ յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար Էլեկտրաէներգիայի պահանջարկը արտահայտված կՎտժ-ով:
140. ՕԱՇ մասնակցի բանկային երաշխիքի թույլատրելի սահմանաչափի մնացորդը պետք է առնվազն եռակի գերազանցի վերջինիս կողմից ներկայացվող գնման Հայտում նշված Էլեկտրաէներգիայի արժեքը, որը հաշվարկվում է գնման Հայտում նշված Էլեկտրաէներգիայի քանակի և ՀԾՄ մատուցման համար Հանձնաժողովի սահմանած առավելագույն գնի հիման վրա:
141. ՕԱՇ-ի այն մասնակիցները, որոնք հանդիսանում են ՀՊԿ Արտադրողների համար ՕԱՇ վաճառքի Հայտը ներկայացնում են առանձնացված ըստ յուրաքանչյուր Արտադրողի Առաքման կետի:

### **ԳԼՈՒԽ 37. ՕԱՇ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄ**

142. ՕԱՇ Հայտերի ներկայացումը մեկնարկում է ՕՐԱՆ1-ի ժամը 10:30-ին և ավարտվում ՕՐԱՆ1-ի ժամը 13:00-ին, որը ՕԱՇ մուտքի փակման ժամն է:
143. ԷՄՇ առևտրի մասնակիցները մինչև ՕԱՇ մուտքի փակումը իրավունք ունեն փոփոխել կամ ընդհանրապես չեղարկել ներկայացված Հայտերը:
144. Շուկայի օպերատորը ՇԿԾ միջոցով իրականացնում է ՕԱՇ Հայտերի համապատասխանության գնահատում և մինչև ՕՐԱՆ1 ժամը 14:00 հաստատում կամ ՕԱՇ մասնակցին է ուղարկում Հայտը շտկելու առաջարկ՝ համապատասխան հիմնավորումներով: Շուկայի օպերատորի կողմից ՕԱՇ Հայտը շտկելու առաջարկ ստացած մասնակիցները մինչև ՕՐԱՆ1 14:30 պարտավոր են Շուկայի օպերատորին ներկայացնել Հայտի վերջնական տարբերակը:
145. Շուկայի օպերատորը ՕՐԱՆ1 ժամը 14:30 դրությամբ ստացված բոլոր Հայտերի հիման վրա ՇԿԾ համակարգի միջոցով իրականացնում է ՕԱՇ քլիրինգը, որի արդյունքում որոշվում են ՕԱՇ քլիրինգային գները և գնված ու վաճառված Էլեկտրաէներգիայի քանակները ՕՐԱ յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար:
146. ՕԱՇ քլիրինգն իրականացվում է հետևյալ կանոններով.
- 1) Էլեկտրաէներգիայի գնման Հայտերի հիման վրա որոշվում է ՕՐԱ յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածում Էլեկտրաէներգիայի ընդհանուր պահանջարկը (ԿՎտժ),
  - 2) Էլեկտրաէներգիայի վաճառքի Հայտերը դասակարգվում են ՕՐԱ յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար ըստ գնի (դրամ/ԿՎտժ) աճման կարգի և դրանց համապատասխան առաջարկվող Էլեկտրաէներգիայի քանակների.
  - 3) ՕՐԱ յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար ընտրվում են Էլեկտրաէներգիայի վաճառքի այն հայտերը, որոնց գները հավասար են կամ ցածր ՕԱՇ հավասարակշռության գնից: ՕԱՇ հավասարակշռության գինը ընդունվում է հավասար Հայտերում՝ վաճառքի և գնման ենթակա Էլեկտրաէներգիայի քանակների հավասարակշռության կետում առաջարկված վաճառքի Հայտի գնին.
  - 4) ՕԱՇ հավասարակշռության գնից ցածր գին ներկայացրած բոլոր վաճառքի Հայտ ներկայացրած մասնակիցների համար վաճառքի գին է համարվում ՕԱՇ հավասարակշռության գինը և ՕԱՇ համարվում է ավարտված:
  - 5) ՕՐԱ ժամը 15:00 Շուկայի օպերատորը ՇԿԾ համակարգում և իր կայք Էջում հրապարակում է ՕԱՇ քլիրինգային գները և Էլեկտրաէներգիայի առքուվաճառքի գործարքների մասին ամփոփ տվյալները ըստ Առևտրային օրվա Առևտրային ժամանակահատվածների:
147. ՕԱՇ-ի արդյունքում ընտրված վաճառքի և գնման Հայտ ներկայացված մասնակիցների միջև Էլեկտրաէներգիայի առքուվաճառքի գործարքները ՕԱՇ քլիրինգի արդյունքներով համարվում են կնքված: ՕԱՇ գործարքները կնքվում են այնպես, որ ՕԱՇ յուրաքանչյուր մասնակցի վաճառված Էլեկտրաէներգիայի քանակը հավասար համամասնությամբ բաշխվի գնորդների միջև ըստ Առևտրային օրվա Առևտրային ժամանակահատվածների:
148. Շուկայի օպերատորը ՇԿԾ համակարգի միջոցով մինչև ՕՐԱ ժամը 15:30 ՕԱՇ մասնակիցների Էլեկտրոնային քարտերի համապատասխան ենթահաշվիներն ՕԱՇ կնքված գործարքներին համապատասխան հաշվեգրում է մասնակիցների՝ միմյանց առաքման ենթակա Էլեկտրաէներգիայի քանակների և վճարման ենթակա գումարների շարժի մասին տվյալները:



149.ԷՄՇ ՕԱՇ հատվածում կնքված գործարքներից շեղումների դեպքում Շուկայի օպերատորը և գործարքի կողմերը առաջնորդվում են սույն Կանոնների ԳԼՈՒԽ 45-ում բերված ԷՄՇ ՀԱՇ կանոններով:

## **ԲԱԺԻՆ 9. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ, ՏԱՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՓՈԽՅՈՍՔԵՐԸ**

### **ԳԼՈՒԽ 38. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ**

150. Էլեկտրաէներգիայի միջպետական առևտուրն իրականացվում է Օրենքի և սույն Կանոնների համաձայն՝ ՄԱԻ մասնակիցների, Երաշխավորված մատակարարի, Մատակարարների, Որակավորված սպառողների և ՄԷԱ, իսկ սույն կանոններով նախատեսված դեպքերում նաև ԿԷԱ կայանների կողմից՝ վերջիններիս Էլեկտրաէներգիայի ներկրման կամ արտահանման իրավունքներին համապատասխան:

151. Միջպետական առևտուրը կարող է իրականացվել ինչպես օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ Էլեկտրական Էներգիայի առք ու վաճառքի ուղիղ պայմանագրերի կնքման, այնպես էլ Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկան այլ երկրների Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկաների հետ զուգակցելու միջոցով: Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկան այլ երկրների հետ զուգակցելու պայմանները և առք ու վաճառքի կանոնները որոշվում են այդ երկրների հետ կնքված պայմանագրերով:

152. Էլեկտրական Էներգիայի արտահանման դեպքում ԷՄՇ մասնակիցը Էլեկտրաէներգիան գնորդին է հանձնում Արտահանման կետում:

153. Շուկայի օպերատորը և Համակարգի օպերատորը սույն Կանոններով սահմանված կարգով համակարգում են Միջպետական առևտրի իրականացման գործընթացը:

### **ԳԼՈՒԽ 39. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ**

154. Էլեկտրաէներգիայի արտահանումը կարող է իրականացվել ՄԷԱ կայանների, ԿԷԱ կայանների և ՄԱԻ մասնակիցների կողմից՝

- 1) ԷՄՇ ՉՈՒՊ հատվածից.
- 2) ԷՄՇ ԿՈՒՊ հատվածից՝ ՕԱՇ փակումից հետո,
- 3) ՀԾՄ կողմից՝ ԷՄՇ չպահանջված հզորությունների մասով:

155. Կանոնների 154-րդ կետով նախատեսված Էլեկտրաէներգիա արտահանող ԷՄՇ մասնակիցները պետք է ունենան ՀՊԿ կարգավիճակ:

156. Էլեկտրաէներգիայի արտահանման ժամանակ կողմերը առաջնորդվում են սույն Կանոնների 116-120-րդ կետերի պահանջներով:

157. Կանոնների 154-րդ կետով նախատեսված ԷՄՇ մասնակիցները Էլեկտրաէներգիայի արտահանման դեպքում այն գնորդին են հանձնում Արտահանման կետում:

### **ԳԼՈՒԽ 40. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ**

158. Էլեկտրական էներգիայի ներկրումը կարող է իրականացվել Երաշխավորված մատակարարի, Մատակարարների և Որակավորված սպառողների կողմից Էլեկտրաէներգիայի սեփական պահանջարկը բավարարելու, ինչպես նաև ՄԱԻ մասնակիցների կողմից՝ ԷՄՇ ՉՈՒՊ կամ ՕԱՇ վաճառելու նպատակով:

- 159. Կանոնների 158-րդ կետով նախատեսված էլեկտրաէներգիա ներկրող EՄՇ մասնակիցները պետք է ունենան ՅՊԿ կարգավիճակ:
- 160. Էլեկտրաէներգիայի ներկրման դեպքում գործում են EՄՇ այն հատվածի կանոնները, որտեղ այդ էլեկտրաէներգիան նախատեսվում է վաճառել:
- 161. Կանոնների 158-րդ կետով նախատեսված էլեկտրաէներգիա ներկրող EՄՇ մասնակիցները էլեկտրաէներգիայի ներկրման դեպքում այն պետք է վաճառողից ստանան առնվազն Ներկրման կետում:

**ՉԼՈՒԽ 41. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԱՐԱՆՑՈՒՄԸ**

- 162. Էլեկտրաէներգիայի տարանցումն իրականացվում է Հաղորդողի կողմից՝ Հանձնաժողովի տրամադրած էլեկտրական էներգիայի հաղորդման լիցենզիայի, ինչպես նաև Տարանցիկ փոխադրման պատվիրատուի հետ կնքված Տարանցիկ փոխադրման պայմանագրի հիման վրա:
- 163. Հաղորդողը տարանցիկ փոխադրումն իրականացնելու նպատակով պայմանագրեր է կնքում Համակարգի օպերատորի ու Շուկայի օպերատորի հետ, իսկ Բաշխման ցանցը տարանցման նպատակով օգտագործելու դեպքում նաև Բաշխողի հետ:
- 164. Տարանցիկ փոխադրումն իրականացվում է, երբ այն չի հակասում ներքին շուկայի սպառողների շահերին, չի նվազեցնում Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները և չի հանգեցնում ՀԱՎՐԱ և ՀԱԻՐ ուղղություններով EՄՇ մասնակիցների արդեն իսկ կնքված պայմանագրերի շրջանակում ստանձնած պարտավորությունների իրականացմանը:
- 165. Համակարգի օպերատորը տարանցումը սկսելու, ընդհատելու, վերսկսելու և դադարեցնելու մասին գրավոր տեղեկացնում է Հաղորդողին և Շուկայի օպերատորին:
- 166. Համակարգի օպերատորը կարող է դադարեցնել տարանցումը՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների նվազման կամ նվազման վտանգի դեպքում:
- 167. Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներով կամ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգում պլանավորված ռեժիմների խախտմամբ պայմանավորված Տարանցիկ փոխադրման պայմանագրային քանակների հնարավոր չկատարման մասին Համակարգի օպերատորը անմիջապես իրազեկում է Հաղորդողին, իսկ Հաղորդողը՝ Տարանցիկ փոխադրման պատվիրատուին:
- 168. Հաղորդողը Ներկրման կետում Տարանցիկ փոխադրման պատվիրատուից ընդունում է տարանցվող էլեկտրական էներգիան և Արտահանման կետում Տարանցիկ փոխադրման պատվիրատուին հանձնում նույն քանակի էլեկտրաէներգիա:
- 169. Տարանցիկ փոխադրման ընթացքում Հաշվառումն իրականացնում է Շուկայի օպերատորը՝ սույն Կանոնների [X]-րդ բաժնի համաձայն:
- 170. Տարանցիկ փոխադրման համար Հաղորդողի կողմից Տարանցիկ փոխադրման պատվիրատուին մատուցվող ծառայության գինը չի կարգավորվում, սակայն այն չի կարող պակաս լինել Հանձնաժողովի կողմից սահմանված՝ Հաղորդման, Համակարգի օպերատորի և Շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման սակագների հանրագումարից:

**ԳԼՈՒԽ 42. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՓՈԽՅՈՍՔԵՐԸ**

- 171. Փոխհոսքերն իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրության ռեժիմների բարելավման և ծախսերի նվազեցման նպատակով և չեն կրում առևտրային բնույթ:
- 172. Փոխհոսքեր իրականացնողը պայմանագրեր է կնքում Համակարգի օպերատորի, Շուկայի օպերատորի ու Հաղորդողի, իսկ Բաշխման ցանցը այդ նպատակով օգտագործելու դեպքում նաև Բաշխողի հետ:
- 173. Փոխհոսքեր իրականացողները իրենց պարտավորությունների ապահովման նպատակով իրավունք ունեն էլեկտրաէներգիա գնել ԷՄՇ ՉՈՒՊ բաղադրիչում կամ ՀԱՇ հատվածում, եթե վերջիններս հանդիսանում են ՀՊԿ:
- 174. Փոխհոսքերի իրականացումն ապահովվում է Համակարգի օպերատորը:
- 175. Համակարգի օպերատորը փոխհոսքերը սկսելու, ընդհատելու, վերսկսելու և դադարեցնելու մասին գրավոր տեղեկացնում է փոխհոսք իրականացնողին և Շուկայի օպերատորին:
- 176. Համակարգի օպերատորը կարող է դադարեցնել փոխհոսքերը՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների նվազման կամ նվազման վտանգի դեպքում:
- 177. ՀԱՎՐԱ փոխհոսքեր կարող է իրականացել էլեկտրաէներգիա ներկրելու և արտահանելու իրավունք ունեցող ԷՄՇ ցանցկացած մասնակից, որը փոխհոսքերի իրականացման համար կնքել է համապատասխան պայմանագիր:
- 178. ՀԱԻՐ փոխհոսքերն իրականացվում են ԵրՋԷԿ-ի կողմից՝ Հանձնաժողովի տրամադրած էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի, ինչպես նաև ՀԱԻՐ փոխհոսքերի պայմանագրի հիման վրա:
- 179. ՀԱԻՐ փոխհոսքերի ապահովման նպատակով չի կարող գնվել Որոտանի կասկադի էլեկտրական էներգիան:

**ԳԼՈՒԽ 43. ՄԻՋՉԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀՉՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ**

- 180. Միջպետական առևտրի, տարանցման կամ փոխհոսքերի իրականացման նպատակով միջհամակարգային ազատ հզորությունների օգտագործման իրավունքը ԷՄՇ մասնակիցներին տրվում է Համակարգի օպերատորի կողմից հետևյալ կերպ.
  - 1) ՀԱՎՐԱ ուղղությամբ միջհամակարգային հզորությունների օգտագործման իրավունքը նախապատվության իրավունքով տրամադրվում է առաջինը դիմած ԷՄՇ առևտրի մասնակցին, Հաղորդողին կամ Բաշխողին:
  - 2) ՀԱԻՐ ուղղությամբ միջհամակարգային հզորությունների օգտագործման առաջնային իրավունքը տրվում է ԵրՋԷԿ-ին փոխհոսքերի իրականացման նպատակով: Մնացած ազատ հզորությունները տեղաբաշխվում են սույն կետի 1-ենթակետով սահմանված կարգով:
- 181. Միջպետական առևտրի, տարանցման կամ փոխհոսքերի ապահովման նպատակով կարող են իրականացվել միջհամակարգային ազատ հզորությունների տեղաբաշխման աճուրդներ և կնքվել դրանց օգտագործման պայմանագրեր: Այդպիսի աճուրդների իրականացման պայմանները Համակարգի օպերատորը և Շուկայի օպերատորը մշակում և համաձայնեցնում են համապատասխան երկրների լիազորված մարմինների հետ և ներկայացնում Հանձնաժողովի հաստատմանը:

## ԲԱԺԻՆ 10. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՀԱՇՎԵԿՇՈՄԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

### ԳԼՈՒԽ 44. ՀԱՇՎԵԿՇՈՄԱՆ ՇՈՒԿԱՆ

182. Հաշվեկշռման շուկան բաղկացած է Համակարգի օպերատորի հրահանգով իրական ժամանակում պահանջարկի և առաջարկի հաշվեկշռման նպատակով ՀԾՄ կողմից մատուցած ծառայություններից, ինչպես նաև ՕՐԱ համար կնքած Գործարքների փաստացի շեղումներից:
183. Հաշվեկշռման շուկան հանդիսանում է կարգավորվող շուկա, որում իրականացված Գործարքները որոշվում են Շուկայի օպերատորի կողմից ՇԿԾ համակարգի միջոցով իրականացվող Անհաշվեկշռույթների հաշվարկի արդյունքում:
184. ՀԾՄ-ն ՕՐԱՆ1 ժամը 15:30 ՇԿԾ համակարգում հրապարակում է ՕՐԱ իր կողմից հաշվեկշռման նպատակով արտադրվելիք Էլեկտրաէներգիայի գները Առևտրային բոլոր ժամանակահատվածների համար, որոնք չեն կարող գերազանցել Հանձնաժողովի կողմից սահմանված առավելագույն գինը:
185. ՀԾՄ-ն պարտավոր է ենթարկվել Համակարգի օպերատորի՝ ՕՐԱ պահանջարկի և առաջարկի հաշվեկշռման բոլոր հրահանգներին:
186. ԷՄՇ մասնակիցները իրենց առաջացրած անհաշվեկշռույթների համար վճարում են ՀԾՄ-ին: ՀԾՄ-ն պարտավոր է գնել ԷՄՇ մասնակիցների Էլեկտրաէներգիայի ավելցուկները սույն Կանոններում սահմանված դեպքերում և կարգով:

### ԳԼՈՒԽ 45. ԱՆՀԱՇՎԵԿՇՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

187. Անհաշվեկշռույթները հաշվարկվում են Շուկայի օպերատորի կողմից ՇԿԾ համակարգի միջոցով յուրաքանչյուր ՀԴԿ-ի համար ըստ ՕՐԱ Առևտրային ժամանակահատվածների՝ ԷՄՇ ՉՈՒՊ և ԿՈՒՊ բաղադրիչներում ու ՕԱՇ հատվածում կնքված Գործարքների նկատմամբ:
188. Յուրաքանչյուր ՀԴԿ-ի ՕՐԱ անհաշվեկշռույթների ծավալը որոշվում է ԷՄՇ մասնակիցների Հաշվառքի սարքերի տվյալների հիման վրա և հրապարակվում Շուկայի օպերատորի կողմից ՇԿԾ համակարգի միջոցով մինչև ՕՐԱ հաջորդող օրը ժամը 9:00 հետևյալ կերպ.
- 1) որոշվում է Հաշվեկշռման խմբի Հաշվառման կետերում փաստացի արտադրված ու սպառված Էլեկտրաէներգիայի քանակությունների տարբերությունը ՕՐԱ բոլոր Առևտրային ժամանակահատվածների համար կամ ՀԴԿ Հաշվեկշռված զուտ դիրքը (այսուհետ ՀԴԿ ՀԶԴ),
  - 2) որոշվում է ՀԴԿ կողմից ԿՈՒՊ բաղադրիչում ու ՕԱՇ հատվածում ՀԴԿ կարգավիճակ ունեցող յուրաքանչյուր ԷՄՇ մասնակցի հետ.
    - ա) կնքած Գործարքների շրջանակում գնման կամ վաճառքի ենթակա Էլեկտրաէներգիայի գումարային քանակությունը ըստ ՕՐԱ Առևտրային ժամանակահատվածների,
    - բ) այդ Գործարքների շրջանակում, Հաշվեկշռման խմբից դուրս, փաստացի սպառված կամ առաքված Էլեկտրաէներգիայի քանակությունները ՕՐԱ յուրաքանչյուր Առևտրային ժամանակահատվածի համար ըստ համապատասխան Հաշվառման կետերի,
    - գ) սույն կետի ա) և բ) ենթակետերին համապատասխան հաշվարկված Էլեկտրաէներգիայի քանակությունների տարբերությունները ՕՐԱ բոլոր Առևտրային ժամանակահատվածների համար կամ ՀԴԿ ՕՐԱ զուտ դիրքը (այսուհետև՝ ՀԴԿ ՕՐԱՀԶԴ).

3) որոշվում է ՀՊԿ կողմից ՉՈՒՊ բաղադրիչում ՀՊԿ կարգավիճակ ունեցող ԷՄՇ մասնակիցներից յուրաքանչյուրի հետ կնքած Գործարքների շրջանակում գնման կամ առաքման ենթակա Էլեկտրաէներգիայի քանակությունների տարբերությունները փաստացի արտադրված ու սպառված Էլեկտրաէներգիայի քանակությունների նկատմամբ ՕՐԱ բոլոր Առևտրային ժամանակահատվածների համար կամ ՀՊԿ ՉՈՒՊ գուտ դիրքը (այսուհետ՝ ՀՊԿ ՉՉԴ):

189. ՀՊԿ-ների միջև ՕՐԱ արդյունքներով անհաշվեկշռությունների համար հաշվեգրման ենթակա գումարների մեծությունները որոշվում են հետևյալ կերպ.

1) երբ ՀՊԿ-ն հանդես է եկել որպես Էլեկտրաէներգիայի վաճառող ԿՈՒՊ բաղադրիչում ու ՕԱՇ հատվածում, ապա.

ա) ՀՊԿ ՕՐԱՉԴ դիրքը եղել է բացասական, քանի որ վերջինս ԿՈՒՊ բաղադրիչում ու ՕԱՇ հատվածում կնքված Գործարքների համեմատությամբ փաստացի վաճառել է ավելի քիչ Էլեկտրաէներգիա, ապա Էլեկտրաէներգիայի այդ քանակին և Կանոնների 184-րդ կետով սահմանված ՀԾՄ ՕՐԱ համար հայտարարած գնին համապատասխան գումար է դեբետագրվում վերջինիս Հաշվեկշռման ենթահաշվին որպես ՀԾՄ-ին վճարման ենթակա գումար,

բ) ՀՊԿ ՕՐԱՉԴ դիրքը եղել է դրական, քանի որ վերջինս ԿՈՒՊ բաղադրիչում ու ՕԱՇ հատվածում կնքված Գործարքների համեմատությամբ փաստացի վաճառել է ավելի շատ Էլեկտրաէներգիա, ապա Էլեկտրաէներգիայի այդ քանակին և Հանձնաժողովի կողմից ԿՈՒՊ հատվածում վաճառքի համար սահմանված սակագնին համապատասխան գումար է կրեդիտագրվում վերջինիս Հաշվեկշռման ենթահաշվին որպես ՀԾՄ-ի կողմից վճարման ենթակա գումար,

2) երբ ՀՊԿ-ն հանդես է եկել որպես Էլեկտրաէներգիայի գնորդ ԿՈՒՊ բաղադրիչում ու ՕԱՇ հատվածում, ապա.

ա) եթե ՀՊԿ ՕՐԱՉԴ դիրքը եղել է բացասական, քանի որ վերջինս ԿՈՒՊ բաղադրիչում ու ՕԱՇ հատվածում կնքված Գործարքների համեմատությամբ փաստացի գնել է ավելի քիչ Էլեկտրաէներգիա, ապա Էլեկտրաէներգիայի այդ քանակին և Կանոնների 184-րդ կետով սահմանված ՀԾՄ ՕՐԱ համար հայտարարած գնին համապատասխան գումար է դեբետագրվում վերջինիս Հաշվեկշռման ենթահաշվին որպես ՀԾՄ-ին վճարման ենթակա գումար,

բ) եթե ՀՊԿ ՕՐԱՉԴ դիրքը եղել է դրական, քանի որ վերջինս ԿՈՒՊ բաղադրիչում ու ՕԱՇ հատվածում կնքված Գործարքների համեմատությամբ փաստացի գնել է ավելի շատ Էլեկտրաէներգիա, ապա Էլեկտրաէներգիայի այդ քանակին և Կանոնների 184-րդ կետով սահմանված ՀԾՄ ՕՐԱ համար հայտարարած գնին համապատասխան գումար է դեբետագրվում վերջինիս Հաշվեկշռման ենթահաշվին որպես ՀԾՄ-ին վճարման ենթակա գումար,

3) երբ ՀՊԿ-ն Էլեկտրաէներգիա է գնել կամ վաճառել ՉՈՒՊ բաղադրիչում, ապա.

ա) եթե ՀՊԿ ՉՉԴ դիրքը եղել է բացասական, քանի որ վերջինս ԿՈՒՊ բաղադրիչում կնքված Գործարքների համեմատությամբ փաստացի գնել է ավելի քիչ Էլեկտրաէներգիա, ապա վերջինիս ենթահաշիվներում դեբետագրում կամ կրեդիտագրում չի իրականացվում,

բ) եթե ՀՊԿ ՕՐԱՉԴ դիրքը եղել է դրական, քանի որ վերջինս ՀՊԿ-ն ԿՈՒՊ բաղադրիչում ու ՕԱՇ հատվածում կնքված Գործարքների համեմատությամբ փաստացի գնել է ավելի շատ Էլեկտրաէներգիա, ապա Էլեկտրաէներգիայի այդ քանակին և Կանոնների 184-րդ կետով

սահմանված ՅՃՄ ՕՐԱ համար հայտարարած գնին համապատասխան գումար է դեբետագրվում վերջինիս Հաշվեկշռման ենթահաշվին որպես ՅՃՄ-ին վճարման ենթակա գումար,

- 4) երբ ՀՊԿ-ն հանդես է եկել որպես էլեկտրաէներգիայի արտահանող, ապա.
  - ա) եթե ՀՊԿ-ն ՕՐԱ արդյունքներով դրանից առաջ կնքված Գործարքների համեմատությամբ փաստացի արտահանել է ավելի քիչ էլեկտրաէներգիա, ապա վերջինիս ենթահաշիվներում դեբետագրում կամ կրեդիտագրում չի իրականացվում,
  - բ) եթե ՀՊԿ-ն ՕՐԱ արդյունքներով դրանից առաջ կնքված Գործարքների համեմատությամբ փաստացի արտահանել է ավելի շատ էլեկտրաէներգիա, ապա էլեկտրաէներգիայի այդ քանակին և Կանոնների 184-րդ կետով սահմանված ՅՃՄ ՕՐԱ համար հայտարարած գնին համապատասխան գումար է դեբետագրվում վերջինիս Հաշվեկշռման ենթահաշվին որպես ՅՃՄ-ին վճարման ենթակա գումար,
- 5) երբ ՀՊԿ-ն հանդես է եկել որպես էլեկտրաէներգիայի ներկրող, ապա.
  - ա) եթե ՀՊԿ-ն ՕՐԱ արդյունքներով դրանից առաջ կնքված Գործարքների համեմատությամբ փաստացի ներկրել է ավելի քիչ էլեկտրաէներգիա, ապա էլեկտրաէներգիայի այդ քանակին և Կանոնների 184-րդ կետով սահմանված ՅՃՄ ՕՐԱ համար հայտարարած գնին համապատասխան գումար է դեբետագրվում վերջինիս Հաշվեկշռման ենթահաշվին որպես ՅՃՄ-ին վճարման ենթակա գումար,
  - բ) եթե ՀՊԿ-ն ՕՐԱ արդյունքներով դրանից առաջ կնքված Գործարքների համեմատությամբ փաստացի ներկրել է ավելի շատ էլեկտրաէներգիա, ապա վերջինիս ենթահաշիվներում դեբետագրում կամ կրեդիտագրում չի իրականացվում:

190.Շուկայի օպերատորը անհաշվեկշռույթների համար սույն Կանոնների 189-րդ կետով սահմանված հաշվեգրումներն իրականացնում է մինչև ՕՐԱՆ1 ժամը 15:30:

## **ԲԱԺԻՆ 11. ԷՄՇ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ**

### **ԳԼՈՒԽ 46. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

- 191.ԷՄՇ առևտրի մասնակիցները, Հաղորդողը և Բաշխողը սույն Կանոններով նախատեսված դեպքերում պարտավոր են երաշխավորել ՕԱՇ և ՀԱՇ հատվածներում, ինչպես նաև ՉՈՒՊ և ԿՈՒՊ բաղադրիչներում գնված էլեկտրաէներգիայի ու մատուցված ծառայությունների դիմաց վաճառողների օգտին վճարումները՝ բանկային երաշխիքի միջոցով:
- 192.ԷՄՇ այն մասնակիցները, որոնք ՕԱՇ և ՀԱՇ հատվածներում, ինչպես նաև ՉՈՒՊ և ԿՈՒՊ բաղադրիչներում մասնակցում են որպես գնորդներ, ապա ԷՄՇ պայմանագրի ստորագրման հետ միասին Շուկայի օպերատորին են ներկայացնում էլեկտրաէներգիա վաճառողների ու ԷՄՇ ծառայություններ մատուցողների օգտին տվյալ ԷՄՇ մասնակցի վճարումները երաշխավորող Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ բանկի կողմից տրամադրված երաշխիք:
- 193.Երաշխիք տված բանկը գրավոր պարտավորություն է ստանձնում ԷՄՇ մասնակցի կողմից Գործարքներով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Շուկայի օպերատորի որոշման կամ գրության հիման վրա, Շուկայի օպերատորի սահմանած ժամկետում, անվիճելի և անառարկելի կարգով փոխանցել վերջինիս նշած ԷՄՇ համապատասխան մասնակցի բանկային հաշվին:
- 194.Բանկային երաշխիքի՝

- 1) գործողության ժամկետը չի կարող պակաս լինել 45 օրից,
  - 2) սահմանված գումարի մեծությունը չի կարող պակաս լինել գնման Հայտերի ներկայացման համար Կանոններով սահմանված անհրաժեշտ մնացորդից:
195. Շուկայի օպերատորը ներկայացված բանկային երաշխիքը ներբեռնում է ՇԿԾ համակարգ և վերջինիս միջոցով ՇԿԾ համակարգում ամրագրում տվյալ ԷՄՇ մասնակցի՝ Էլեկտրաէներգիա գնելու և ծառայություններ ստանալու առավելագույն թույլատրելի սահմանաչափը ելնելով ներկայացված բանկային երաշխիքի չափից:
196. Բանկային երաշխիքի առավելագույն թույլատրելի սահմանաչափը լրանալուն պես ԷՄՇ մասնակիցը զրկվում է ՕԱՇ և ՀԱՇ հատվածներում ու ԿՈՒՊ բաղադրիչում նոր Հայտեր ներկայացնելու ու Գործարքներ կնքելու իրավունքից:
197. Սույն Կանոնների 180-196 կետերը չեն վերաբերում Երաշխավորված մատակարարին: Երաշխավորված մատակարարը իր կողմից ԵՐՊ, ՕԱՇ և ՀԱՇ հատվածներում ու ԿՈՒՊ բաղադրիչում գնված Էլեկտրական Էներգիայի դիմաց վաճառողների օգտին վճարումները երաշխավորում է սույն Կանոնների ԳԼՈՒԽ 47-ի համաձայն:

**ԳԼՈՒԽ 47. ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՇՎԻՑ ԿՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

198. Համաձայն Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 748-Ա որոշմամբ Երաշխավորված մատակարարին տրված Էլեկտրական Էներգիայի երաշխավորված մատակարարման N 0633 լիցենզիայի պայմանների՝ ԵՐՊ, ՕԱՇ և ՀԱՇ հատվածներում ու ԿՈՒՊ բաղադրիչում գնված Էլեկտրական Էներգիայի դիմաց վաճառողների ու ծառայություններ մատուցողներին երաշխավորված վճարումներ ապահովելու համար Երաշխավորված մատակարարը բացում է Հատուկ հաշիվ (հաշիվներ) և ներկայացնում է Հանձնաժողովի հետ համաձայնեցված բանկային երաշխիք՝ անհրաժեշտ երաշխիքային գումարի չափով (այսուհետ՝ Երաշխիք)՝ որպես նախորդ ամսվա վերջի դրությամբ առկա պարտքերի վճարումն ապահովելու լրացուցիչ միջոց: Երաշխիքը կազմում է նախորդ տարվա միջին ամսական գնված Էլեկտրական Էներգիայի և մատուցված ծառայությունների ընդհանուր գումարի 10 տոկոսը: Հատուկ հաշիվը (հաշիվները) սպասարկող բանկերի ընտրությունը համաձայնեցվում է Հանձնաժողովի հետ:
199. Հատուկ հաշվի (հաշիվների) սպասարկման պայմանագրերը և դրանցում, ինչպես նաև երաշխիքում կատարվող փոփոխությունները նախապես համաձայնեցվում են Հանձնաժողովի հետ:
200. Հատուկ հաշվի (հաշիվների) միջոցները կառավարվում են սույն Կանոնների և Երաշխավորված մատակարարին տրված լիցենզիայի պայմաններին համապատասխան:
201. Սպառված Էլեկտրական Էներգիայի դիմաց սպառողների կողմից կատարվող կանխիկ դրամական վճարումներն ընդունվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի և վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու լիցենզիա ստացած իրավաբանական անձանց (այսուհետ՝ վճարահաշվարկային կազմակերպություններ) կողմից, այդ բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների հետ Երաշխավորված մատակարարի հետ կնքած պայմանագրերի հիման վրա: Համաձայն այդ պայմանագրերի՝ սպառված Էլեկտրական Էներգիայի դիմաց սպառողներից մուտքագրված գումարներն առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից մեկ բանկային օրվա ընթացքում փոխանցվում են Հատուկ հաշվին (հաշիվներին), բացառությամբ «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից հավաքագրված գումարների, որոնք Երևան քաղաքում մեկ, այլ քաղաքային համայնքներում՝ մինչև երկու և գյուղական համայնքներում՝ մինչև հինգ բանկային օրվա ընթացքում փոխանցվում են Հատուկ հաշվին (հաշիվներին):



Սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սպառողներից մուտքագրված գումարները, բացի Հատուկ հաշվից (հաշիվներից), որևէ այլ բանկային հաշիվների չեն կարող փոխանցվել, ինչն ամրագրվում է բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների հետ Երաշխավորված մատակարարի կնքած պայմանագրերում: Այդ պայմանագրերը և հետագայում դրանցում կատարվող փոփոխությունները ներկայացվում են Հանձնաժողովի համաձայնեցմանը:

202.Սպառված էլեկտրական էներգիայի դիմաց բանկային փոխանցում իրականացնելու դեպքում սպառողները դրամական միջոցները փոխանցում են միայն Երաշխավորված մատակարարի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում ներկայացված բանկային հաշվեհամարին, իսկ Երաշխավորված մատակարարը սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սպառողներին ներկայացվող հաշվարկային փաստաթղթերում, որպես բանկային հաշվեհամար, ամրագրում է միայն Հատուկ հաշիվներից կամ դրանց կից բացված տեխնիկական հաշիվներից (ենթահաշիվներից) որևէ մեկը:

203.Գնված էլեկտրաէներգիայի դիմաց Երաշխավորված մատակարարի դրամային վճարումները կարող են իրականացվել միայն Հատուկ հաշվի (հաշիվների) միջոցով՝ Երաշխավորված մատակարարի վճարման հանձնարարագրերի հիման վրա:

204.Պայմանագրերով սահմանված ժամկետում Երաշխավորված մատակարարի կողմից վճարումներ չիրականացնելու դեպքում ԵՐՊ, ՕԱՇ և ՀԱՇ հատվածների ու ԿՈՒՊ բաղադրիչի մասնակիցները կարող են դիմել երաշխիք տված բանկին՝ երաշխիքի սահմաններում իրենց պահանջները բավարարելու համար: Երաշխիք տված բանկը այդ անձանց կողմից ներկայացված դիմումները քննության է առնում և համապատասխան որոշում ընդունում 5 աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ երաշխիքով սահմանված գումարը բավարար չէ ներկայացված դիմումներով պահանջվող և երաշխիք տված բանկի կողմից բավարարման ենթակա վճարումները կատարելու համար, Երաշխավորված մատակարարը պարտավոր է սույն կետում նշված՝ երաշխիք տված բանկի կողմից դիմումների քննության և համապատասխան որոշման ընդունման համար նախատեսված 5 աշխատանքային օրվա ընթացքում Հատուկ հաշիվը (հաշիվները) համալրել պակասող գումարի չափով և վճարել երաշխիք տված բանկին դիմումներ ներկայացրած անձանց՝ դիմումներով պահանջվող և բավարարման ենթակա մնացած (պակասող) գումարի չափով: Երաշխիք տված բանկի կողմից դիմումները բավարարվելու դեպքում Երաշխավորված մատակարարը 10 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի համաձայնեցմանն է ներկայացնում նոր երաշխիք:

205.Հատուկ հաշվին (հաշիվներին) մուտքագրվող գումարներն ամբողջությամբ, յուրաքանչյուր ամսվա 5-ից համարվում են գրավադրված ԵՐՊ, ՕԱՇ և ՀԱՇ հատվածներում և ԿՈՒՊ բաղադրիչներում էլեկտրաէներգիա վաճառողների և ծառայություններ մատուցող ընկերությունների օգտին՝ որպես նախորդ ամսվա վերջի դրությամբ առկա պարտքերի վճարումն ապահովելու միջոց, որն ամրագրվում է Երաշխավորված մատակարարի և այդ անձանց միջև կնքվող գրավի պայմանագրում (պայմանագրերում): Գրավի պայմանագիրը (պայմանագրերը), ինչպես նաև նրանում (նրանցում) կատարվող փոփոխությունները և լրացումները համաձայնեցվում են Հանձնաժողովի հետ: Գրավադրման ընթացքում Հատուկ հաշվին (հաշիվներին) մուտքագրված գումարները ելքագրվում են նաև ներքին շուկայում վաճառելու նպատակով Երաշխավորված մատակարարի կողմից այլ անձանցից գնված էլեկտրական էներգիայի դիմաց վճարումներ կատարելու համար: Գրավադրումը դադարում է Երաշխավորված մատակարարի կողմից նախորդ ամսվա վերջի դրությամբ գրավառումների նկատմամբ առկա դրամական պարտավորությունների ամբողջական կատարումից հետո: Նշված գործառույթի իրականացումից հետո միայն Երաշխավորված մատակարարը կարող է տնօրինել Հատուկ հաշվում (հաշիվներում) առկա գումարներն ու փոխանցել միայն իր ընթացիկ հաշիվներին:



206. Հատուկ հաշվին (հաշիվներին) կարող են մուտքագրվել միայն սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից հավաքագրված կամ բացառապես Երաշխավորված մատակարարի ընթացիկ հաշիվներից փոխանցված գումարները, իսկ Հատուկ հաշվից (հաշիվներից) դրամական միջոցները կարող են ելքագրվել միայն ԵՐՊ, ՕԱՇ և ՀԱՇ հատվածներում ու ԿՈՒՊ բաղադրիչում էլեկտրաէներգիա վաճառողների և մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար, կամ Կանոնների 205-րդ կետով սահմանված գրավադրման դադարեցման դեպքում՝ բացառապես Երաշխավորված մատակարարի ընթացիկ հաշիվներին:
207. Սույն կանոնների 206-րդ կետում նշված դրույթներն ամրագրվում են Հատուկ հաշվի (հաշիվների) սպասարկման պայմանագրում (պայմանագրերում):
208. Երաշխավորված մատակարարը յուրաքանչյուր ամիս Հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան, Հատուկ հաշվի (հաշիվների) գումարների շարժի մասին հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողով:

## **ԲԱԺԻՆ 12. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**

### **ԳԼՈՒԽ 48. ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵԿՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

209. Սույն բաժնով կանոնակարգվում են ԷՄՇ-ում էլեկտրաէներգիայի Հաշվառման հետ կապված հարաբերությունները:
210. ԷՄՇ-ում էլեկտրաէներգիայի Առևտրային հաշվառումը, Հաղորդման ցանցում փաստացի ռեժիմներով պայմանավորված էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկումը և Հաղորդման ցանցում էլեկտրաէներգիայի փաստացի կորուստների հաշվառումն իրականացնում է Շուկայի օպերատորը:
211. ԷՄՇ-ում էլեկտրաէներգիայի Առևտրային հաշվառումը Շուկայի օպերատորը կատարում է ԷՄՇ մասնակիցների՝ Հաղորդման և Բաշխման ցանցերի հետ ունեցած Սահմանազատման կետերի համար՝ այդ կետերում կամ դրանց էլեկտրական ցանցով մոտակա կետերում տեղադրված Հաշվառքի կետերից ստացված Հաշվառման տվյալների հիման վրա: Ընդ որում, առևտրային հաշվառքի սարքերի խափանման դեպքում Շուկայի օպերատորը էլեկտրաէներգիայի Առևտրային հաշվառումը կատարում է ԷՄՇ պայմանագրում ամրագրված վերստուգիչ հաշվառքի սարքերից ստացված տվյալների հիման վրա:
212. Շուկայի օպերատորը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ներկայացրած տվյալների հավաստիության համար:
213. ԷՄՇ մասնակիցներին պետք է հասանելի լինեն Հաշվառմանը վերաբերող իրենց բոլոր տվյալները առնվազն վերջին երեք տարիների համար:

### **ԳԼՈՒԽ 49. ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

214. Հաշվառքի կետերից տվյալների հավաքագրումն իրականացնում է Շուկայի օպերատորը՝ հաշվառման ավտոմատացված համակարգի միջոցով:
215. Հաշվառման տվյալների հավաքագրման նպատակով՝
- 1) Շուկայի օպերատորը ապահովում է՝

- ա) համակարգային, գլխավոր, հանգուցային և տարածաշրջանային սերվերների ծրագրային ապահովման փաթեթների աշխատունակ վիճակը.
  - բ) տվյալների հավաքագրումը հանգուցային ու տարածաշրջանային սերվերներից դեպի համակարգային սերվեր,
- 2) EՄՇ մասնակիցները (բացառությամբ Բաշխման ցանցի մինչև 110կՎ լարման էլեկտրատեղակայանքներին միացված Արտադրողների էլեկտրակայանների) ապահովում են՝
- ա) հաշվառման համակարգում գրանցված Հաշվառքի կետերից տվյալների հավաքագրումը հանգուցային և տարածաշրջանային սերվերներում.
  - բ) հանգուցային և տարածաշրջանային սերվերների, ինչպես նաև հաշվառման տվյալների հեռահաղորդակցության համար ծառայող սարքերի աշխատունակ վիճակը,

216. Շուկայի օպերատորը ապահովում է Հաշվառման տվյալների ՇԿԾ համակարգում իրական ժամանակում արտացոլումը Առևտրային օրվա Առևտրային բոլոր ժամանակահատվածների համար և դրանց ամբողջական ստուգումը հաջորդող աշխատանքային օրը:

**ԳԼՈՒԽ 50. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԱՐՏԱԴՐՈՂԻ ՄՈՏ**

217. Արտադրողի առաքած էլեկտրական Էներգիան հաշվառվում է յուրաքանչյուր կայանի համար առանձին՝ ըստ Սահմանազատման կետերի:

218. Շուկայի օպերատորը պարտավոր է Արտադրողի առաքած կամ սպառած էլեկտրաէներգիան հաշվառել՝

- 1) Արտադրող-Հաղորդող և Արտադրող-Բաշխող Սահմանազատման կետերում,
- 2) Արտադրող-սպառող Սահմանազատման կետում,
- 3) Միջհամակարգային հոսանքահաղորդման կետում էլեկտրական Էներգիայի ներհոսքն ու արտահոսքը:

**ԳԼՈՒԽ 51. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՀԱՂՈՐԴՈՂԻ ԵՎ ԲԱՇԽՈՂԻ ՄՈՏ**

219. Հաղորդողի հաղորդած էլեկտրական Էներգիայի Հաշվառումը կատարվում է ինչպես Արտադրող-Հաղորդող և Արտադրող-Բաշխող Սահմանազատման կետերում, այնպես էլ Ներկրման և Արտահանման կետերում, իսկ Բաշխողինը՝ Բաշխող-ԷՄՇ մասնակից Սահմանազատման կետերում:

220. Շուկայի օպերատորը Հաղորդողի և Բաշխողի մոտ պարտավոր է հաշվառել.

- 1) Ներկրման կետում ԷՄՇ ներկրման իրավունք ունեցող մասնակցի կողմից ներկրված էլեկտրաէներգիան,
- 2) Արտահանման կետում Հաղորդողի կողմից արտահանման նպատակով ԷՄՇ արտահանման իրավունք ունեցող մասնակցին հանձնված էլեկտրաէներգիան,
- 3) Հաղորդող-Բաշխող Սահմանազատման կետում Բաշխողին հանձնված էլեկտրական Էներգիան,
- 4) Բաշխող-ԷՄՇ մասնակից Սահմանազատման կետերում վերջինիս հանձնված էլեկտրական Էներգիան:

**ԳԼՈՒԽ 52. ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԴԵՊՔԵՐԸ**

- 221. Շուկայի օպերատորը, Հաշվառքի կետերից ստացված տվյալների հավաստիության ստուգման նպատակով, ՕՐԱՀ1 ընթացքում պարտավոր է կազմել ԷՄՇ մասնակիցների Էլեկտրաէներգիայի հաշվեկշիռը:
- 222. Եթե կազմված հաշվեկշիռը ցույց է տալիս անհաշվեկշռության թույլատրելի սահմանի գերազանցում, ապա Շուկայի օպերատորը պարտավոր է.
  - 1) կազմել ակտ՝ Չափիչ համալիրի խափանման վերաբերյալ,
  - 2) կատարել վերահաշվարկ՝ Էլեկտրական Էներգիայի և ծառայության վերաբերյալ ակտերում ստացված արդյունքները հաշվի առնելու նպատակով:
- 223. Անհաշվեկշռության թույլատրելի սահմանը որոշվում է Շուկայի օպերատորի կողմից՝ համաձայն Հանձնաժողովի 2001 թվականի նոյեմբերի 19-ի N 60 որոշմամբ հաստատված 110 կՎ և բարձր լարման ցանցերում Էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկի մեթոդիկայի (Հավելված N 1\*):
- 224. Իրան արտահանվող Էլեկտրական Էներգիայի հաշվառումը գազ Էլեկտրական Էներգիայի դիմաց գործարքի շրջանակում իրականացվում է սույն Կանոնների Հավելված N 2-ի համաձայն:

**ԳԼՈՒԽ 53. ՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑՈՒՄ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ**

- 225. Շուկայի օպերատորը մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը պարտավոր է Հաղորդողին գրավոր տեղեկատվություն ներկայացնել Հաղորդման ցանցում նախորդ ամսվա համար հաշվառված Էլեկտրաէներգիայի փաստացի կորուստների վերաբերյալ, ինչպես նաև այդ տեղեկատվությունը հրապարակել ՇԿԾ-ում:
- 226. Տվյալ Հաշվարկային ժամանակահատվածի համար, Շուկայի օպերատորը մինչև հաջորդ ամսվա 15-ը, Կանոնների Հավելված N 1-ի համաձայն, պարտավոր է հաշվարկել Հաղորդման ցանցում փաստացի ռեժիմներով պայմանավորված Էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների մեծությունը, ներկայացնել Հաղորդողին և հրապարակել ՇԿԾ համակարգում:

**ԳԼՈՒԽ 54. ՀԱՇՎԱՐԿՆԵՐ**

- 227. Յուրաքանչյուր ամսի առաջին աշխատանքային օրը Շուկայի օպերատորը հիմք ընդունելով ԷՄՇ մասնակիցների Էլեկտրոնային հաշիվներում Կանոնների ԳԼՈՒԽ 29-ով սահմանված տեղեկատվությունը, ինչպես նաև ԷՄՇ-ում մատուցված ծառայությունները՝ ՇԿԾ-ի միջոցով կազմում է վճարման ենթակա Էլեկտրաէներգիայի վերաբերյալ ակտերը և ներկայացնում ԷՄՇ առևտրի մասնակիցների, Հաղորդողի, Բաշխողի ստորագրմանը:
- 228. ԷՄՇ առևտրի մասնակիցները, Հաղորդողը, Բաշխողը, վճարման ենթակա Էլեկտրաէներգիայի վերաբերյալ ակտի մատով առարկություն չունենալու դեպքում՝ ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում են Շուկայի օպերատորի կողմից ներկայացրած վճարման ենթակա Էլեկտրական Էներգիայի վերաբերյալ ակտը:
- 229. ԷՄՇ առևտրի մասնակիցները, Հաղորդողը, Բաշխողը վճարման ենթակա Էլեկտրաէներգիայի վերաբերյալ ակտը ստորագրելուց մեկ աշխատանքային օրվա

\* 110 կՎ և բարձր լարման ցանցերում Էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկի մեթոդիկան հանդիսանալու է սույն Կանոնների բաղկացուցիչ մաս՝ սահմանվելով որպես Կանոնների Հավելված N 1:

ընթացքում կազմում և մյուս կողմերին են ներկայացնում առաքված կամ գնված  
Էլեկտրաէներգիայի կամ մատուցված ծառայությունների համար հաշվարկային  
փաստաթուղթ:

230. Հաշվարկային փաստաթուղթը ստացած ԷՄՇ մասնակիցը ստանալուց մեկ  
աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում է (հաստատում է) իրեն առաքված  
կամ իր կողմից գնված Էլեկտրաէներգիայի, ինչպես նաև իր կողմից մատուցված  
կամ իրեն մատուցած ծառայությունների համար կազմված հաշվարկային  
փաստաթուղթը, և ստորագրելուց երեք աշխատանքային օրվա ընթացքում  
կատարում համապատասխան վճարումները:

## **ԲԱԺԻՆ 13. ՇՈՒԿԱՅԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ**

### **ԳԼՈՒԽ 55. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ**

231. Շուկայի օպերատորը և Համակարգի օպերատորը պատասխանատու են սույն  
բաժնով նախատեսված տվյալների հավաքագրման և իրենց կայք-էջերում  
հրապարակման համար՝ ապահովելով դրանց մշտական հասանելիությունը:

232. Համակարգի օպերատորը հավաքագրում և հրապարակում է հետևյալը՝

- 1) Առևտրային ժամանակահատվածում համակարգի բեռի մասին տեղեկատվություն, որը հրապարակվում է Շուկայի օպերատորից ստացված տվյալների հիման վրա,
- 2) Համակարգի բեռի կանխատեսում ըստ Առևտրային ժամանակահատվածների, որը հրապարակվում է ՕԱՇ-ի մուտքը փակվելուց առնվազն [X] ժամ առաջ և հետագայում անընդհատ թարմացվում է [X] ժամը մեկ անգամ,
- 3) Համակարգի բեռի շաբաթ, ամիս, տարի-առաջ գումարային կանխատեսում, որը հրապարակվում է կանխատեսվող տվյալների հիման վրա: Տարի-առաջ Համակարգի բեռի կանխատեսումը հրապարակվում է յուրաքանչյուր շաբաթ:
- 4) Հաղորդման ցանցի անպատրաստականության վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է պատրաստականության փոփոխության պահից ոչ ուշ, քան մեկ ժամ հետո,
- 5) Առկայության դեպքում գերբեռնվածության կառավարման միջոցների վերաբերյալ տեղեկատվություն,
- 6) Ընդհանուր արտադրության ծավալի կանխատեսում ըստ Առևտրային ժամանակահատվածների,
- 7) Արտադրող ագրեգատների անպատրաստականության վերաբերյալ տեղեկատվություն,
- 8) Փաստացի արտադրություն ըստ Առևտրային ժամանակահատվածների (ըստ արտադրության տեխնոլոգիաների, եթե այդպիսի տվյալներ առկա են),
- 9) Վերականգնվող Էներգիայի աղբյուրների կանխատեսում ըստ Առևտրային օրվա Առևտրային ժամանակահատվածների: Այդպիսի կանխատեսումները պետք է հրապարակվեն Առևտրային օրվա յուրաքանչյուր Հաշվարկային ժամանակահատվածի համար մինչև ՕՐԱՆ1 օրվա ժամը XX:XX և մշտապես թարմացվեն ամեն X ժամը մեկ անգամ՝ Առևտրային օրվա մնացած Հաշվարկային ժամանակահատվածների համար:

### **ԳԼՈՒԽ 56. ՕԱՇ-Ի ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ**

233. ՕԱՇ-ում Համակարգի օպերատորը հավաքագրում և հրապարակում է հետևյալը՝

- 1) Համակարգի բեռի մասին տեղեկատվությունը՝ ըստ Առևտրային ժամանակահատվածների,
- 2) Էլեկտրաէներգիայի առևտրի ծավալը՝ ՕԱՇ-ում,
- 3) ՕԱՇ-ի Զլիրիկային գինը՝ ըստ Առևտրային օրվա Առևտրային ժամանակահատվածների,
- 4) Անհաշվեկշռային կարգավորման համար Կանոնների ԳԼՈՒԽ 45-ին համաձայն որոշված գները՝ ըստ Հաշվարկային ժամանակահատվածների,
- 5) Անհաշվեկշռային ընդհանուր ծավալը՝ ըստ Հաշվարկային ժամանակահատվածների:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1. 110 ԿՎ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԱՐՄԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ  
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ  
ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴԻԿԱ**

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԻՐԱՆ ԱՐՏԱՅԱՆԿՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ՝ ԳԱՁ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԴԻՄԱՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

234. Սույն հավելվածը սահմանում է Իրանի հետ իրականացվող գազ՝ էլեկտրական էներգիայի դիմաց փոխանակման գործարք (այսուհետ՝ Փոխանակման գործարք) շրջանակում Փոխանակում իրականացնողի կողմից Իրան արտահանվող էլեկտրական էներգիայի Հաշվառման գործընթացը:
235. Փոխանակում իրականացնողը իրավասու է Փոխանակման գործարքի շրջանակում արտահանել ինչպես իր կողմից արտադրված, այնպես էլ այլ ՁԷԿ-ում արտադրված կամ էլեկտրական էներգիայի ներկրման լիցենզիա ունեցող անձից գնված, կամ տարանցման նպատակով իր կողմից ներկրված էլեկտրական էներգիան:
236. Համակարգի օպերատորը Հաշվարկային ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի արտահանման ռեժիմները պլանավորելիս առաջնորդվում է էլեկտրական էներգիայի գործող սակագների հաշվարկների հիմքում դրված էլեկտրական էներգիայի արտադրության և արտահանման հաշվեկշռով:
237. Սույն Հավելվածի շրջանակում Հաշվարկային ժամանակահատվածի ընթացքում Փոխանակում իրականացնողի կողմից արտահանվող էլեկտրական էներգիայի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{u1} = W_{u1} + W_{u2} + W_{u3} + W_{u4},$$

որտեղ՝

- 1)  $W_{u1}$ -ը տարանցման նպատակով Փոխանակում իրականացնողի կողմից ներկրված և Արտահանման կետում Փոխանակում իրականացնողին հանձնված էլեկտրական էներգիայի քանակն է՝ Հաշվարկային ժամանակահատվածում,
- 2)  $W_{u2}$ -ը Փոխանակում իրականացնողի կողմից ներկրման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակցից գնված և Արտահանման կետում Փոխանակում իրականացնողին հանձնված էլեկտրական էներգիայի քանակն է՝ Հաշվարկային ժամանակահատվածում,
- 3)  $W_{u3}$ -ը Փոխանակում իրականացնողի կողմից ՁԷԿ-ից գնված և Արտահանման կետում Փոխանակում իրականացնողին հանձնված էլեկտրական էներգիայի քանակն է՝ Հաշվարկային ժամանակահատվածում,
- 4)  $W_{u4}$ -ը Փոխանակում իրականացնողի կողմից առաքված և Արտահանման կետում Փոխանակում իրականացնողին հանձնված էլեկտրական էներգիայի քանակն է Հաշվարկային ժամանակահատվածում:

238.  $W_{u1}$ -ը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{u1} = W_{uերկ1} - \Delta W_{կոր},$$

որտեղ՝

- 1)  $W_{uերկ1}$ -ը տարանցման նպատակով Փոխանակում իրականացնողի կողմից ներկրված և ներկրման կետում Հաղորդողին հանձնված էլեկտրական էներգիայի քանակն է՝ Հաշվարկային ժամանակահատվածում,
- 2)  $\Delta W_{կոր}$ -ը Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների մեծությունն է Հաշվարկային ժամանակահատվածում, որն ընդունվում է Հաշվարկային ժամանակահատվածում Հաղորդման ցանցերի փաստացի կորուստների տեսակարար (տոկոսային) մեծության հիման վրա:

239.  $W_{u2}$ -ը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{u2} = W_{տերկ2} - \Delta W_{կոր},$$

որտեղ՝

- 1)  $W_{տերկ2}$ -ը Փոխանակում իրականացնողի կողմից ներկրման իրավունք ունեցող  $ԷՄՇ$  մասնակցից գնված և ներկրման կետում Հաղորդողին հանձնված էլեկտրական Էներգիայի քանակն է Հաշվարկային ժամանակահատվածում:

240.  $W_{u3}$ -ը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{u3} = W_{uռ1} - W_{տերքիս1} - \Delta W_{կոր},$$

որտեղ՝

- 1)  $W_{uռ1}$ -ը Արտադրող-Հաղորդող, Արտադրող-Բաշխող, Արտադրող-սպառող Սահմանազատման կետերում ՋԷԿ-ի կողմից առաքված էլեկտրական Էներգիայի գումարային քանակն է Հաշվարկային ժամանակահատվածում,
- 2)  $W_{տերքիս1}$ -ը Արտադրող-Հաղորդող, Արտադրող-Բաշխող, Արտադրող-սպառող Սահմանազատման կետերում ՋԷԿ-ի կողմից ներքին շուկա առաքված էլեկտրական Էներգիայի գումարային քանակն է՝ Հաշվարկային ժամանակահատվածում: Սույն հավելվածի 241-243-րդ կետերով ամրագրված պահանջները բավարարելուց հետո  $W_{տերքիս1}$ -ը որոշվում է որպես ներքին շուկայում էլեկտրական Էներգիայի հաշվեկշիռը փակող էլեկտրական Էներգիայի քանակ:

241.  $W_{u4}$ -ը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{u4} = W_{uռ2} - W_{տերքիս2} - \Delta W_{կոր},$$

որտեղ՝

- 1)  $W_{uռ2}$ -ը արտահանման իրավունք ունեցող  $ԷՄՇ$  մասնակցից-Հաղորդող, արտահանման իրավունք ունեցող  $ԷՄՇ$  մասնակցից-Բաշխող և արտահանման իրավունք ունեցող  $ԷՄՇ$  մասնակցից-սպառող Սահմանազատման կետերում Փոխանակում իրականացնողի կողմից առաքված էլեկտրական Էներգիայի գումարային քանակն է Հաշվարկային ժամանակահատվածում,
  - 2)  $W_{տերքիս2}$  -ը արտահանման իրավունք ունեցող  $ԷՄՇ$  մասնակցից-Հաղորդող, արտահանման իրավունք ունեցող  $ԷՄՇ$  մասնակցից-Բաշխող և արտահանման իրավունք ունեցող  $ԷՄՇ$  մասնակցից-սպառող Սահմանազատման կետերում Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա առաքված էլեկտրական Էներգիայի գումարային քանակն է՝ Հաշվարկային ժամանակահատվածում, որն ընդունվում է էլեկտրական Էներգիայի գործող սակագնի հաշվարկում տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա էլեկտրական Էներգիայի առաքմանը հավասար, բացառությամբ սույն հավելվածի 242-րդ և 243-րդ կետերում նշված դեպքերի:
242. Սույն հավելվածի 241-րդ կետում նշված  $W_{տերքիս2}$  -ը կարող է ընդունվել էլեկտրական Էներգիայի գործող սակագնի հաշվարկում տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված՝ Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա էլեկտրական Էներգիայի առաքումից ավելի քիչ, երբ՝
- 1) Հաշվարկային ժամանակահատվածում  $W_{տերքիս1}$ -ն ընդունվել է զրո և, գետերի բնական ելքերով պայմանավորված՝ ՀԷԿ-երը և ատոմային էլեկտրակայանը ապահովել են էլեկտրական Էներգիայի առավելագույն արտադրությունը: Այդ



դեպքում  $W_{տերքիս2}$  -ը որոշվում է որպես ներքին շուկայում էլեկտրական էներգիայի հաշվեկշիռը փակող էլեկտրական էներգիայի քանակ: Էլեկտրական էներգիայի գործող սակագնի հաշվարկում տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված՝ Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա էլեկտրական էներգիայի առաքման և տվյալ Հաշվարկային ժամանակահատվածում  $W_{տերքիս2}$  -ի տարբերությունը պետք է ավելացնել տվյալ Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող Հաշվարկային ժամանակահատվածներում արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-Հաղորդող, արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-Բաշխող և արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-սպառող Սահմանազատման կետերում Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա առաքված էլեկտրական էներգիայի գումարային քանակին:

- 2) Հաշվարկային ժամանակահատվածում  $W_{ուն2}$  -ը փոքր է էլեկտրական էներգիայի գործող սակագնի հաշվարկում տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված՝ Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա էլեկտրական էներգիայի առաքումից: Այդ դեպքում  $W_{տերքիս2}$ -ն ընդունվում է հավասար  $W_{ուն2}$  -ին: Էլեկտրական էներգիայի գործող սակագնի հաշվարկում տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված՝ Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա էլեկտրական էներգիայի առաքման և տվյալ Հաշվարկային ժամանակահատվածում  $W_{տերքիս2}$ -ի տարբերությունը պետք է ավելացնել տվյալ Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող Հաշվարկային ժամանակահատվածներում արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-Հաղորդող, արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-Բաշխող և արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-սպառող Սահմանազատման կետերում Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա առաքված էլեկտրական էներգիայի գումարային քանակին:
- 3) տվյալ Հաշվարկային ժամանակահատվածին նախորդող Հաշվարկային ժամանակահատվածներում  $W_{տերքիս2}$  -ը եղել է ավելի մեծ, քան էլեկտրական էներգիայի գործող սակագնի հաշվարկում նախատեսված՝ Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա էլեկտրական էներգիայի առաքումը, և այդ տարբերությունը սույն հավելվածի 243-րդ կետի համաձայն նվազեցվել է տվյալ Հաշվարկային ժամանակահատվածի  $W_{տերքիս2}$  -ից:

243. Սույն հավելվածի 241-րդ կետում նշված  $W_{տերքիս2}$ -ը կարող է ընդունվել էլեկտրական էներգիայի գործող սակագնի հաշվարկում տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված՝ Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա էլեկտրական էներգիայի առաքումից ավելի շատ, երբ՝

- 1) Հաշվարկային ժամանակահատվածում  $W_{ուն1}$ -ը հավասար է գրոյի և  $W_{տերքիս2}$ -ը որոշվում է որպես ներքին շուկայում էլեկտրական էներգիայի հաշվեկշիռը փակող էլեկտրական էներգիայի քանակ: Էլեկտրական էներգիայի գործող սակագնի հաշվարկում տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված՝ Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա էլեկտրական էներգիայի առաքման և տվյալ Հաշվարկային ժամանակահատվածի ընթացքում  $W_{տերքիս2}$ -ի տարբերությունը բացարձակ արժեքով պետք է նվազեցնել տվյալ Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող Հաշվարկային ժամանակահատվածներում արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-Հաղորդող, արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-Բաշխող և արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-սպառող Սահմանազատման կետերում Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա առաքված էլեկտրական էներգիայի գումարային քանակից:
- 2) Հաշվարկային ժամանակահատվածում  $W_{ուն1}$ -ը ամբողջությամբ ուղղվել է ներքին շուկայի պահանջարկի բավարարմանը, և ներքին շուկայի հաշվեկշիռը փակելու համար էլեկտրական էներգիայի գործող սակագնի հաշվարկում տվյալ

ժամանակահատվածի համար նախատեսված՝ Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկայում էլեկտրական Էներգիայի առաքումը բավարար չէ:  $W_{\text{ներքին2}}$ -ը որոշվում է որպես ներքին շուկայում էլեկտրական Էներգիայի հաշվեկշիռը փակող էլեկտրական Էներգիայի քանակ: Էլեկտրական Էներգիայի գործող սակագնի հաշվարկում տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված՝ Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա էլեկտրական Էներգիայի առաքման և տվյալ Հաշվարկային ժամանակահատվածում  $W_{\text{ներքին2}}$ -ի տարբերությունը բացարձակ արժեքով պետք է նվազեցնել տվյալ Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող Հաշվարկային ժամանակահատվածներում արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-Հաղորդող, արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-Բաշխող և արտահանման իրավունք ունեցող ԷՄՇ մասնակից-սպառող Սահմանազատման կետերում Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա առաքված էլեկտրական Էներգիայի գումարային քանակից:

3) տվյալ Հաշվարկային ժամանակահատվածին նախորդող Հաշվարկային ժամանակահատվածներում  $W_{\text{ներքին2}}$ -ը եղել է ավելի փոքր, քան էլեկտրական Էներգիայի գործող սակագնի հաշվարկում նախատեսված՝ Փոխանակում իրականացնողի կողմից ներքին շուկա էլեկտրական Էներգիայի առաքումը, և այդ տարբերությունը, սույն հավելվածի 242-րդ կետի համաձայն, ավելացվել է տվյալ Հաշվարկային ժամանակահատվածի  $W_{\text{ներքին2}}$ -ին:

244.  $W_{\text{ներքին2}}$ -ը հաշվարկային տարվա արդյունքով պետք է հաշվառվի էլեկտրական Էներգիայի գործող սակագնի հաշվարկում նախատեսված՝ Փոխանակում իրականացնողի կողմից տարեկան արդյունքով էլեկտրական Էներգիայի ընդհանուր առաքման նկատմամբ ներքին շուկա էլեկտրական Էներգիայի առաքման մասնաբաժնին համապատասխան չափով: